Այս առաքելությունը մարգարեության վերջին ընծան է՝ թույլ տրված Իմ Հոր կողմից, հոգիներ փրկելու համար

Շաբաթ, 1 սեպտեմբերի, 2012թ առավոտյան ժ 10:25

Իմ, սիրելի աղջիկ, արագությունը, որով Իմ պատգամները տրվում են մարդկությանը, ցույց է տալիս այս Առաքելության հրատապությունը:
Այնքան շատ մարդիկ կորած են աշխարհում:
Այնքան շատ խեղճ հոգիներ չգիտեն թե ով է Աստված՝ Իմ Հայրը:
Այնքան շատերը չեն ընդունում Ինձ՝ Նրա սիրելի Որդուն, որպես Ճշմարիտ Մեսիան:
Այս առաքելությունը մարգարեության վերջին ընծան է՝ թույլ տրված Իմ Հոր կողմից, հոգիներ փրկելու համար:
Այս Պատգամները քրիստոնյաների, հրեաների, մուսուլմանների, աթեիստների, ագնոստիկների և բոլոր նրանց համար է, ովքեր սփոփանք են փնտրում մարդու կողմից ստեղծված կրոնների մեջ:
Բոլոր մարդիկ, բոլոր հոգիներն ունեն միևնույն ցանկությունը՝ իմաստ գտնել իրենց կյանքի մեջ:
Մեծ մասի համար սիրտ կոտրող է, եթե չեն հավատում Աստծուն, քանի որ նրանք հավատացած են, թե ամեն ինչ վերջանում է, երբ իրենց կյանքը երկրի վրա ավարտվում է:
Ոհ, եթե միայն նրանք կարողանային տեսնել, թե ինչ է տեղի ունենում, երբ իրենց հոգիները գալիս են Իմ առջև: Նրանք տեսնում են Ինձ և անխոս են, քանի որ չեն կարողանում հավատալ, որ Ես իրական եմ: Այդպիսի շատ հոգիների ուրախությունը համընկնում է միայն թեթևացման հետ, եթե նրանք մահանում են Շնորհի Վիճակում:
Սակայն խավարի մեջ գտնվող հոգիների ուրախությունը, երբ նրանք տեսնում են Ինձ, ընդհատվում է, և նրանք հեռու են քշվում Ինձնից դեպի դժոխքի խորքերը շոկի և հուսահատության վիճակում:
Այն հոգիները, ովքեր գիտեն Աստծո Ուսուցումները Նրա մարգարեների միջոցով և երկրի վրա Իմ սեփական Առաքելության արդյունքում, և ովքեր մերժում են Ինձ, նրանք գիտես դա:
Դուք ընտրել եք մեջք շրջել Ճշմարտությանը: Ձեր հանդեպ Իմ ունեցած Սիրո պատճառով Ես կանեմ ամենը ինչ կարող եմ՝ բացելու համար ձեր աչքերը:
Ես ընծաներ կբերեմ և Իմ Մեծ Գթասրտության պատճառով կփրկեմ ձեզ: Ես կոչ եմ անում բոլորիդ անկախ նրանից, թե ինչ կրոնի եք հետևում, որ հիմա լսեք այս Խոսքերը:

Դուք բոլորդ գիտեք, թե ինչ է նշանակում լինել ընտանիքի մի մասը:
Ձեզնից ոմանք բավական բախտավոր են եղել ծնվելու այնպիսի ընտանիքներում, ուր սեր կա:
Մյուսներն այնքան էլ օրինյալ չեն և դժվարություններ ու խավար են տեսել ընտանիքում: Մյուսները կորած են, կապատուկներով ծածկված, բարկացած և չեն կարող ճշմարիտ սեր զգալ իրենց ընտանիքների հանդեպ:
Ոմանց դուրս են նետել անապատ՝ իրենք իրենց համար հոգալու, և ոչ մեկը չկա որ օգնի նրանց:
Ոմանք պարզապես որևէ հենարանի կարիք ունեն՝ հենվելու համար, որպեսզի հույս զգան: Ահա թե ինչու շատ խեղճ հոգիներ փորձում են գտնել կրոններ, որոնք ապահովում են այդ բացակայող կապը:
Ցավոք, դա պարզապես նրանց ավելի է տանում դեպի հուսահատություն: Քանի որ այդ կրոնները հիմնված են ստի վրա:
Ստերը վնասում են ձեզ, զավակներս: Նրանք ձեզ տալիս են անվտանգության կեղծ զգացողություն: Այդ կրոնները նյութ չունեն, որովհետև չեն հետևում Ճշմարտությանը՝ Տիրոջ ճանապարհին:
Պարզապես իմացեք, որ Մենք՝ Սուրբ Երրորդությունը, ձեր ընտանիքն ենք: Նոր Երկինքն ու Երկիրը կլինեն ձեր ճշմարիտ տունը:
Հետևեք Ինձ Ճշմարտության ճանապարհով, որպեսզի Ես կարողանամ տանել ձեզ դեպի իրավամբ ձեզ պատկանող տունը:
Մի տուն՝ այնքան լի սիրով և ուրախությամբ, որ միայն դրան պետք է ձգտեք:
Խնդրում եմ բացեք ձեր աչքերը, որովհետև ժամանակը եկել է աշխարհի համար որ վերջպես ստանա Ճշմարտության Ուխտը:
Իմ Մահը Խաչի վրա Ուխտ էր՝ ձեզ փրկություն բերելու համար:
Իմ Երկրորդ Գալուստը նույնպես մի ՈՒխտ է, վերջնական Ուխտը, ձեզ տուն՝ Աստծո մոտ բերելու համար, ով ամեն բանի Արարիչն է:
Իմ Հայրը՝ Ամենաբարձրյալ Աստված, հիմա Ինձ շուտով ուղարկում է՝ փրկություն բերելու Իր բոլոր զավակներին:
Ես կարող եմ սա անել և իրականացնել Իմ Հոր Խոստումը միայն եթե կարողանամ փրկել յուրաքանչյուր հոգու:
Գրավ մի դրեք սիրով, ուրախությամբ և հրաշքով իրականություն դառնալիք կյանքի հնարավորությունը Խաղաղության Նոր Դարաշրջանում:
Ձեր Հիսուս

Ես կոչ եմ անում ձեզ հիմնել կենտրոններ, որտեղ կարող եք վստահանալ, որ Իմ Պատգամները տարածվում են

Երկուշաբթի, 3 սեպտեմբերի ,2012թ.,առավոտյան ժ 10:08

Իմ սիրելի աղջիկ, Իմ բանակը կազմավորվել է, և նրա շարքերը կտարածվեն քրիստոնյա երկրներում, ինչպես նաև այն երկրներում, ուր կոմունիստներն են ղեկավարում:

Ոչ մի երկիր չի մնա առանց Իմ բանակի կողմից դիպչելու, Իմ Մնացորդ Բանակի:

Իմ բանակի ներսում կապավորներ կլինեն, ամեն դասի, ապահովելու համար, որ հոգիներ դարձի բերելու Իմ Առաքելությունը հաջողություն ունենա:

Նրանք բոլորը, Իմ բանակում, անկախ իրենց ունեցած դերի, մի ընդհանուր բան կունենան:

Նրանք կծառայեն Ինձ խոնարհ սպասավորությամբ, և Իմ՝ իրենց Հիսուսի հանդեպ նրանց ունեցած սերը վառ կմնա ողջ Առաքելության ընթացքում:

Սուրբ Հոգու կողմից վառված Բոցերի Ջահը չի մարի, քանի որ դա մի յուրահատուկ ընծա է՝ Իմ զինվորներին ուժեղացնելու համար:

Հիշեք, սա կլինի մի պատերազմ, որն Իմ Հայրը կապահովի, որպեսզի այն հաղթի հանուն Աստծո:

Ես կոչ եմ անում բոլորիդ հիմնել կենտրոններ, որտեղ կարող եք վստահանալ, որ Իմ Պատգամները տարածվում են ամեն հնարավոր ձևով:

Աղոթքը այդ կենտրոնների կարևոր մասն է, որովհետև երբ հիմնեք աղոթախմբեր, կուժեղացնեք Իմ բանակի զորությունը:

Ես կավելացնեմ դարձը, մինչ ավելի շատ աղոթախմբեր կհիմնվեն Իմ Սուրբ Անվամբ:

Անվանեք այդ աղոթախմբերը <<Հիսուսը՝ մարդկությանը>> և թողեք մնացածն Ինձ:

Իմ Սուրբ Հոգին կծածկի ձեզ այդպիսի խմբերում և ուղղություն կտա ձեր ամեն քայլին: Շուտով Ես ձեզ հետագա ցուցումներ կտամ:

Խաղաղության մեջ եղեք: Ես երջանիկ եմ, որ դուք, Իմ սիրելի աշակերտներ, պատասխանեցիք Իմ կանչին այնպիսի սիրով և վստահությամբ:

Ձեր Հիսուս

Իմ Անունն այլևս չի հարգվում: Իմ Անվանը հայհոյում են

Երեքշաբթի, 4 սեպտեմբերի, 2012թ. երեկոյան ժ 11:05

Իմ սիրելի աղջիկ, Ես զգում եմ մերժման ցավը և մարդկության ատելությունը յուրաքանչյուր օրվա ամեն պահի:
Այն երբեք չի թուլանում: Իմ Խաչելությունը միայն սկիզբն էր:
Այն կարող էր ազդարարել մարդկության փրկությունը, բայց Իմ ցավը կշարունակվի մինչև Սատանան աքորվի:
Մինչ նա ներկա է և թագավորում է երկրի վրա, որը նա անում է մինչև հիմա< Իմ ցավն ու տառապանքը երբեք չի վերջանում:
Միակ թեթևացումն այն ուրախությունն է, որը Ես զգում եմ, երբ տեսնում եմ մաքուր հոգիների՝ միմյանց հանդեպ ունեցած իսկական սերն աշխարհում:
Այդ սերն է, որ հնարավոր է դարձնում գիշերվա և ցերեկվա միջև Լույսի պահումը: Քանի որ առանց Իմ Սիրո խավարը կգերիշխեր օրվա մեջ քսանչորս ժամ:
Պատկերացրեք, եթե ցանկանում եք, Իմ ցավը:
Ձեզնից նրանք, ովքեր ցավ և վիրավորանք են զգում նրանց կողմից ում սիրում են, ճշտորեն կիմանան թե ինչի է նման Իմ ցավը:
Երբ ձեզ մտավորապես և ֆիզիկապես դաժանորեն տանջում է ձեր կողմից սիրված մեկը, ցավն ավելի դժվար է տանել:
Նույնիսկ եթե գիտեք, որ ձեզ հետապնդող անձնավորությունը սարսափելի խավարի մեջ է, դա չի թեթևացնում ձեր ցավը: Այն ավելացնում է ձեր տառապանքի ուժգնությունն ու խստությունը:
Դա այն պատճառով է, որ դուք դեռևս հոգ եք տանում ձեզ տանջողների մասին, բայց գիտեք, որ նրանք տառապում են և չեն կարող օգնել իրենք իրենցփոխվելու:

Այնպիսի խավարի մեջ են նրանք, որ երբ փորձում եք բացատրել թե ինչ պետք է անեն իրենց խավարից ազատվելու համար, նրանք չեն լսում:
Նրանք չեն ցանկանում լսել:
Ոչ էլ ցանկանում եներիտասարդացնել իրենց ոգին՝ տեսնելու համար այն լույսը, սերը և ուրախությունը, որը կզգային, եթե միայն լսեին ձեզ՝ այն միակ անձնավորությանը ով ճշմարիտ սիրում է իրենց չնայած իրենց մեղքերին, իրենց ազատվելու միակ հնարավորությանը՝ մերժելու այն վտանգավոր մութ ամպը, որը ծածկում է իրենց ողջ ոգին:
Մերժման ցավը դժվար է Ինձ՝ ձեր Փրկչի, մարդու Որդու համար:
Ես տառապեցի սոսկալի ֆիզիկական տառապանքով, որի մեծ մասը մանրամասնորեն չի

տրվել աշխարհին:. Այնքան սոսկալի էր տառապանքը: Որորվհետև Ես չեի կամենում այդ տեսակի համակրանք:
Ոչ, Ես պարզապես փնտրել եմ ձեր հավատարմությունը, ձեր հավատքը, ինչպես նաև այն ուրախությունն ու թեթևությունը, որը դուք զգում եք՝ իմանալով որ փրկվել եք հավիտենական դատապարտությունից:
Բայց արդյո՞ք մարդկությունն իսկապես գիտի այն Ընծայի մասին, որը Ես նրան իրականում տվել եմ:
Շատերն են գնում պատարագի, կամ ստանում գինին մյուս քրիստոնեական եկեղեցիներում՝ պատվելու համար Իմ Ընծամ, բայց նրանք չեն հասկանում, թե դա ինչ է նշանակում:
Ես տվեցի Ինձ ամբողջապես՝ Մարմնով, Մտքով և Հոգով: Երբ Հաղորդություն եք ստանում, պետք է կուլ տաք Իմ Մարմինն ամբողջապես, այլ ոչ թե պարզապես ասեք, թե պատվում եք Ինձ:
Քանի որ առանց Իմ Մարմնի՝ Իմ Իրական Ներկայության, Ես չեմ կարող գրավել ձեր հոգիները: Մի՞թե չգիտեք դա:
Ինչու՞ չեք ընդունում Իմ առատաձեռն Ընծան այնպես, ինչպես այն բացատրվեց Ի մառաքյալներին: Որ Սուրբ Հաղորդությունն իսկապես Իմ Մարմինն է:
Դուք չեք կարող պատկերացնել այն շնորհները, որոնք կորած են ձեզ համար, ձեր ընտանիքների ևսերունդների համար այն պատճառով, որ հեռացրել եք այդպիսի Ընծայի Զորությունը:
Իմ ցավը երբեք չի անցնում: Ես ողբում եմ: Ես տառապում եմ: Ես լաց եմ լինում, երբ տեսնում եմ մեղքն այնքան համատարած աշխարհում, որ Իմ Անունն այլևս չեն պատվում: Իմ Անվանը հայհոյում են:Ես սուր ցավ եմ զգում:
Քեզ, աղջիկս, տրվել է այդ նույն ցավը վերջին մի քանի ամիսներին: Ես թույլ տվեցի որ չարի կողմից այդ վիրավորանքը ազդի քեզ վրա: Այդ զոհաբերությունը, առաջարկված Ինձ քո կողմից որպս զոհաբերվողող հոգի, դժվարին էր, բայց դու մի պարզ դաս սովորեցիր դրա միջոցով:
Երբ դու հանուն Ինձ զոհ ես դառնում այդպիսի դաժան ձևով ուրիշների ձեռքում, դու զգում ես հենց այն ցավը, որը Ես եմ զգում միևնույն ժամանակ:
Մերը ցավը միահյուսված է, աղջիկս, այդ միստիկ միության մեջ: Դու կամավոր կերպով ընդունեցիր զոհաբերվող հոգի դառնալու Իմ կանչը, իմանալով հետևանքները, հոգիներ փրկելու համար, չնայած դա վախեցնող էր:
Հիմա, երբ դու դարձ ես բերում, գիտես, որ երբ տառապանք է պահանջվում, դա նրա համար է, որ համապասխանեցվի Իմ սեփական տառապանքի հետ, որը շատ տրավմատիկ և վիրավորական է:
Ժամանակ առ ժամանակ դու կփորձես պայքարել քեզ վրա պարտադրվող սարսափից քո մարդկային բնության պատճառով, հատկապես երբ նույնիսկ քո դաստակների մեջ մեխվող մեխերի ցավն ավելի նախընտրելի կլինի այն տառապանքից, որը քեզ խնդրել եմ կրել հանուն Ինձ:
Իմ Շնորհներն օգնեցին քեզ, որ ենթարկվես տառապելու այս խնդրանքներին: Դրանք քեզ

տվեցին մի այնպիսի զորություն, որը քեզ թույլ տվեց բարձրանալ, կանգնել բարձր և գովաբանել Աստծուն: Քանի որ դրանք շնորհներն են՝ օգնելու համար քեզ, որ ընդունես տառապանքը որպես ընծա Աստծուն՝ մահացու մեղքի մեջ գտնվող հոգիներին փրկելու համար:
Զավակներս, մյուս անգամ, երբ ինչ-որ մեկը տառապանք պատճառի ձեզ, ձեզ հետ դաժանորեն վարվի կամ մտավոր հիվանդ համար, դուք կհաղթահարեք ձեր ցավը, եթե կարողանաք հիշել սա:
Աղոթեք Ինձ այս խաչակրաց աղոթքը (75) <<Ես Քեզ եմ տալիս իմ ցավը, Հիսուս>>
<<Հիսուս, ես միացնում եմ իմ ցավն ու տառապանքը այն տառապանքին, որը Դու կրեցիր Գողգոթայում Քո Հոգևարքի ժամանակ:
Ինձ հասցվող ուրաքանչյուր հարված և մեղադրանք ես առաջարկում եմ Քեզ՝ ի պատիվ Քո Փշե Պսակի:
Ինձ հասցվող յուրաքանչյուր անարդար քննադատություն ես առաջարկում եմ Քեզ՝ ի պատիվ Պիղատոսի առջև Քո կրած նվաստացման:
Ուրիշների կողմից ինձ հասցվող յուրաքանչյուր ֆիզիկական տառապանք ես առաջարկում եմ ի պատիվ այան մոտ Քո Խարազանման:
Իմ կրած յուրաքանչյուր վիրավորանք ես առաջարկում եմ ի պատիվ այն ֆիզիկական տանջանքի, որը Դու կրեցիր Փշե Պսակի ընթացքում, երբ պատռեցին Քո Աչքը:
Ամեն անգամ, երբ ես փորձում եմ կրկօրինակել Քեզ, հայտնել Քո Ուսուցումները, և երբ ծաղրի եմ ենթարկվում հանուն Քո Սուրբ Անվան, թույլ տուր ինձ օգնել Քեզ Գողգոթայի ճանապարհին:
Օգնիր ինձ ազատվել հպարտությունից և երբեք չվախենալ ընդունելու, որ ես սիրում ես Քեզ, սիրելի Հիսուս:
Իսկ երբ ամեն ինչ արդեն անհույս թվա իմ կյանքում, սիրելի Հիսուս, օգնիր ինձ քաջ լինել, հիշելով, թե ինչպես Դու կամովին թույլ տվեցիր որ խաչեն քեզ այդպիսի վայրի և դաժան ձևով:
Օգնիր ինձ ոտքի կանգնել և համարվել ճշմարիտ քրիստոնյա, Քո բանակի ճշմարիտ զինվոր, խոնարհ և զղջացող սրտով, ի հիշատակն այն Զոհաբերության, որ Դու կատարեցիր հանուն ինձ:
Բռնիր ձեռքս, սիրելի Հիսուս, և ցույց տուր ինձ, թե ինչպես կարող է իմ սեփական տառապանքը ոգեշնչել ուրիշնորին՝ միանալու Քո բանակին այն միանման մտածող հոգիների հետ, ովքեր սիրում են Քեզ:
Օգնիր ինձ ընդունելու տառապանքը և առաջարկելու այն Քեզ որպես մի ընծա՝ հոգիներ փրկելու համար այն վերջնական մարտում, որը /մղվում է/ չարի բռնակալության դեմ: Ամեն:
Տառապանքը, աղջիկս, որքան էլ որ այն դժվար է, մի Ընծա է, որը Ես օգտագործում եմ, տալով այն նրանց, ում Ես վստահում եմ Իմ Սրտում, որպեսզի կարողանամ հոգիներ փրկել:
Դու, աղջիկս, մեծապես թեթևացրել ես Իմ տառապանքը քո արձագանքով: Այնուամենայնիվ, որոշակի ժամանակ կպահանջվի մինչև Ես կազատվեմ Խաչից:
Դա միայն տեղի կունենա այն ժամանակ, երբ Ես կփրկեմ այսօր աշխարհում կենդանի

հնարավոր ամեն հոգու:
Ձեր Հիսուս

Մի մեծ հակասություն ակնհայտ կդառնա, և մարդը կբաժանվի մարդուց: Եղբայրը՝ եղբոր դեմ:

Չորեքշաբթի, 5 սեպտեմբերի, 2012թ., ցերեկվա ժ. 02:30

Իմ սիրելի աղջիկ, ազգ ազգի ետևից անցումային շրջան են ապրում հենց հիմա:
Ոչ մի ազգ չի կարող չհասկանալ, որ դեռևս շատ փոփոխություններ են կախված օդում:
Ոչ միայն նրանց երկրները կառավարող օրենքներն են սկսում փոխվել, այլև ժամանակին նրանց ունեցած հավատքը թվում է թե գոլորշացել է:
Ավելի ու ավելի քիչ քահանաներ, ավելի ու ավելի քիչ քրիստոնեական եկեղեցու սպասավորներն են առաջ գալիս՝ պաշտպանելու համար Աստծո Օրենքները:
Ոչ էլ նրանք իրենց հավատարմությունն են բղավում Ինձ: Դրա փոխարեն նրանց ձայները սոսկ շշուկներ են այն ձայների մեջ, որոնք մեծադողորդ խոսքեր և սեփական անձի հանդեպ սեր են քարոզում:
Աստծո Խոսքը կուլ է գնում աթեիստների ձայներին, ովքեր քողարկում են իրենց ձայները կառավարական օրենքների հովանու ներքո, որոնք փոփոխվում են հանուն այսպես կոչված Արդարության, հանդուրժողականության՝ հօգուտ բոլորի:
Ձեր առջև ներկայացվող ստերը նախատեսված են ոչնչացնելու համար ոչ միայն Իմ Հոր Խոսքը, այլևս քրիստոսնեությունն աշխարհով մեկ:
Հավատի ուրացությունը տարածվել է անտառային հրդեհի պես և համարյա հասել գագաթնակետին:
Սա է ժամանակը Աստծո միջամտության համար: Բավական են ստերը:
Ստերի թագավորն ամենուրեք խաբում է Աստծո զավակներին: Մի հետևեք ձեր կառավարություններին, ովքեր Աստծո Խոսքը սուտ են հռչակում:
Մի ընդունեք նոր օրենքներ, որոնք թողություն են տալիս մահացու մեղքին:Մարտնչեք, դուք բոլորդ: Պաշտպանեք այն, ինչը ճիշտ է:
Թույլ մի տվեք, որ Ստերի Թագավորի քարոզած օրենքները քաշեն ձեզ և ձեր ընտանիքներին անհատակ փոսի մեջ:
Եթե թույլ տաք օրենքներ, որոնք արգելեն ձեր հավատքի գործադրումը, ապա կտառապեք:
Ձեր հոգիները սնուցման կարիք կունենան, իսկ դուք կհեռանաք Ինձնից:
Բայց եթե ընդունեք մարդասպանությունն ու աբորտը և դեմ չկանգնեք այդպիսի չարիքի դեմ, ապա ձեր երկիրը կպատժվի Աստծո Ձեռքով:
Մինչ հավատի ուրացությությունը շարունակում է ծաղկել ամենուր, մյուս կողմից ավելանում է դարձը, և շուտով այդ երկուսը կբախվեն իրար:
Մի մեծ հակասություն ակնհայտ կդառնա, և մարդը կբաժանվի մարդուց: Եղբայրը՝ եղբոր

դեմ: Հարևանը՝ հարևանի դեմ:
Երկու ճանբար կլինի: Նրանք, ովքեր սիրում են Աստծուն, և նրանք՝ ովքեր չեն սիրում:
Ես յուրաքանչյուր հոգու հնարավորություն կտամ որոշելու, թե որ ճամբարի մասն են ցանկանում դառնալ, հույսով, որ նրանք կընտրեն Ինձ՝ իրենց սիրելի Փրկչին:
Դուք, Իմ աշակերտներ, ձեր աղոթքների միջոցով, հատկապես իմունիտետի շնորհի համար խնդրական աղոթքով, կարող եք ավելի շատ հոգիներ բերել Ինձ մոտ:
Հետո Ես կխլեմ բարի մարդկանց կտանեմ Իմ Գիրկը, ինչպես կանխասացվել է, և մի ակնթարթում նրանք կլինեն ապահովության մեջ:
Իմ Խոստումն է փրկել մարդկությանը:
Բայց վերջնական ընտրությունը կթողնվի, որպեսզի յուրաքանչյուր հոգի ընտրի իր սեփական ազատ կամքով:
Ձեր Հիսուս

Այս առաքելությունը կարելի է համեմատել հսկայական օվկիանոսային գծանավի փրկության հետ

Ուրբաթ, 7 սեպտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 08:35

Իմ սիրելի աղջիկ, դու երբեք չպետք է զգաս, թե միայնակ ես աշխատում այս Առաքելության մեջ, նույնիսկ եթե դա այդպես թվա:
Դու պետք է իմանաս, որ աշխարհում շատ մարդիկ են լսում Իմ Սուրբ Խոսքը, և որ Իմ Պատգամները հոգիներ են փրկում:
Այս առաքելությունը կարելի է համեմատել հսկայական օվկիանոսային գծանավի փրկության հետ:
Շատ հոգիներ են նախազգուշացվում վտանգի մասին, և նրանց նախապես ասվում է փրկության պլանը:
Եթե լսեն, նրանք կփրկեն ոչ միայն իրենց, ապա իրենց ընտանիքների և ընկերների կյանքը:
Շատերը չեն լսի և կասեն. <<Ի՞նչ վտանգ>>: Նրանք չեն ընդունի փրկարար նավակները , որովհետև չեն հավատում որ նավը կխորտակվի:
Ոչ, ասում են նրանք, դա կեղծ նախազգուշացում է, կեղծ ահազանգ: Մինչ ժամանակը կմոտենա, և վերջնական օրերն ակնհայտ կդառնան, նրանք կմագլցեն ամենուր՝ փնտրելով ապահով վայր:
Նրանք կվազեն և կթաքնվեն պայթյունից, երբ լեռները կսուզվեն ծովերի մեջ, և երբ երկինքը կդառնա արյունի պես, բայց նրանք չեն փախչի:
Այն հոգիները, որոնք սարսափելի ծանր մեղքեր են գործում Իմ Հոր դեմ և գիտեն, թե որքան սև են իրենց հոգիները, նրանք կկորչեն:
Նրանք, ովքեր կանգնած կլինեն Գազանի կողքին, այդ էտապում կփորձեն փրկվել նրա

ճանկերից: Քանի որ այդ ժամանակ է, որ Ճշմարտությունը վերջապես արշալույսի պես կբարձրանա նրանց վրա, և Լույսը չի լինի նրանց իրավունքը:
Միայն խավարը կթեթևացնի նրանց ցավը, և չնայած դրան, այն նրանց կբերի նաև չթուլացող սարսափ և տառապանք:
Երբեք մի մերժեք այն օգնությունը, որի կարիքն ունեք ձեր հոգիները նախապատարսատելու համար: Դուք պետք է ընդունեք, որ աշխարհում պետք է արմատախիլ արվի չարությունը:
Այն մեղավորները, ովքեր մերժում են փոխվել, նույնիսկ այն բանից հետո, երբ նրանց կտրվի Աստծո Խոսքի Ճշմարտությունը, չեն դիմանա վերեջնական մարտին:
Նրանք կնետվեն կրակի լճի մեջ գազանի հետ միասին, և դա չի լինի նրանց տառապանքի վերջը: Այն կլինի միայն սկիզբը:
Նրանց, ովքեր ծաղրում են հոգիները նախապատրաստելու Իմ ջանքերը, ձեզ կտրվի ամեն մի հնարավորություն՝ ետ դառնալու դեպի ինձ:
Ամեն ջանք կարվի՝ ձեզ փրկելու համար:
Երկիրն այնպես է թվում, ինչպես եղել է դարեր առաջ:
Երկինքը նույնն է թվում:
Արևը փայլում է, ինչպես միշտ:
Լուսինը մեղմ փայլում է պայծառ գիշերով, և մարդը շարունակում է զարմանքից շնչահեղձ լինել Աստծո Արարչությամբ:
Բայց փոփոխություններն արդեն սկսվել են, և նրանց, ովքեր զգոն են, Ես ասում եմ հետևյալը:
Դուք գիտեք և զգում եք փոփոխությունը: Կատարեք ձեր պարտականությունը և օգտագործեք աղոթքը, որպեսզի մարդկության աչքերը բացվեն Ճշմարտության հանդեպ, և որ բոլորի սրտերը բացվեն Աստծո Սիրո համար:
Իր բոլոր զավակների հանդեպ Աստծո ունեցած Սիրո և նրա զավակների պատասխանի միջոցով կարող է մարդկային ռասն փրկվել:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Մի հրաշալի ապագա է Աստծո բոլոր զավակների առջևում

Շաբաթ, 8 սեպտեմբերի, 2012թ., ցերեկվա ժ 03:30

Զավակս, թող Աստծո բոլոր զավակները հանգիստ նստեն և թույլ տան, որ Նրա Լույսը փայլի իրենց հոգիների միջով:
Կարևոր է ժամանակ հատկացնել կատարյալ լռության մեջ՝ մտածելու համար Աստծո Սիրո մասին, և մարդկությանը փրկելու Իմ Որդու պլանի մասին:
Մի հրաշալի ապագա է Աստծո բոլոր զավակների առջևում, և Խաղաղության այդ Նոր Դարաշրջանը կողջունեն բոլոր նրանք, ովքեր այդքան բախտավոր կլինեն ներս մտնել դարպասներից:

Մինչև այդ օրվա գալը, չարի կողմից ամեն ջանք գործ կդրվի՝ աշխարհում պառակտում և ատելություն առաջացնելուի համար:
Նա և իր չարքերը բաժանում են առաջացնում Աստծո զավակների միջև:
Նրանք խրախուսում են մարդասպանությունը, աբորտը, ատելությունը, բռնությունը, հալածանքն ու պատերազմը աշխարհի յուրաքանչյուր մասում:
Նրանք հանգիստ չեն ունենա մինչև ծուղակը չգցեն յուրաքանչյուր թույլ հոգու, որ տեղի տան իրենց առջև դրված գայթակղություններին և մեղանաչեն Տեր Աստծո՝ Ամենաբարձրյալ Աստծո հանդեպ:
Այնքան շատ հոգիներ են անգիտակցաբար թույլ տվել, որ իրենց տանեն դեպի նրանց խավար բանտը, որտեղից շատ դժվար է ազատվել երբ արդեն ընկնում են այնտեղ:
Հենց որ չարը իշխանություն է ձեռք բերում հոգու վրա, նա կանգ չի առնում, մինչև ամբողջովին չի թունավորում խեղճ հոգուն:
Հետևաբար, մեղքից պետք է խուսափել, քանի որ ոչ մի մեղք քիչ հետևանքներ չունի: Միայն մեկ գայթակղությունը բավական է, որ հոգին դառնա թույլ և անպաշտպան:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք այն պատերազմի դեմ, որը հիմա չարն է սանձազերծել Աստծո զավակների դեմ:
Երբ որևէ մեկը մեղանչում է ձեր դեմ, նույնիսկ այն դեպքում, երբ դուք անմեղ զոհ եք, դուք չպետք է ձեզ թույլ տաք վրեժխնդիր լինել մեղքի միջոցով, քանի որ դա հենց այն է, ինչ չարն ուզում է:
Նա դնում է մի հոգուն մյուսի դեմ, հուսալով, որ այդ երկուսի արանքում ատելությունը կնստի:
Զգոն եղեք ամեն օր և երբեք մի մոռացեք այն պաշտպանությունը, որն առաջարկում է Իմ Վարդարանը Սատանայի դեմ:
Ես խրախուսում եմ բոլոր հոգիներին, բոլոր կրոններին, որ ամեն օր ասեն Իմ Սուրբ Վարդարանը: Երբ դա անեք, չարը կխուսափի ձեզնից և կթողնի ձեզ, քանի որ նա չի կարող դիմանալ այն ցավին, որը զգում է, երբ Իմ Վարդարանն ասվում է, հատկապես երբ այն բարձր է ասվում:
Գնացեք խաղաղությամբ: Հիշեք, Ես ողջ մարդկության Մայրն եմ:
Ես Փրկության Մայրն եմ: Աստծո զավակները պետք է փնտրեն Իմ պաշտպանությունը:
Իմ օգնությունն ու աղոթքները խնդրելու միջոցով ձեզ շատ շնորհներ կտրվեն:

Աստծո Մայր
Փրկության Մայր

Ճշմարիտ սերը գալիս է Աստծուց: Երբ մարդը բավարար չի սիրում Աստծուն, նա ի վիճակի չէ սիրելու մեկ այլ մարդկային էակի ճշմարիտ սիրո լրության մեջ

Կիրակի, 9 սեպտեմբերի, 2012թ., առավոտյան ժ 10:00

Իմ սիրելի աղջիկ, երբ կասկածում ես Աստծո Սիրուն, ապա կասկածում ես ճշմարիտ սիրո գոյությանը: Եվ քեզ մնում է միայն խեղաթյուրված սեր:
Ճշմարիտ սերը գալիս է Աստծուց: Երբ մարդը Աստծուն չի սիրում բավարար չափով, ապա նա անկարող է սիրել մեկ այլ մարդկային արարածի ճշմարիտ սիրո լրությամբ:
Միայն նրանք, ովքեր իրենց հոգում ունեն Աստծո Սիրո կրակը, միայն նրանք կարող են ճշմարտապես հասկանալ սիրո իմաստը մեկ այլ անձնավորության մեջ:
Նույն բանը ճիշտ է նրանց համար, ում ամուսնությունն օրհնվել է եկեղեցու կողմից:
Աստծո Սերը, որը կփայլի տղամարդու և կնոջ ամուսնության վրա որ սիրում են միմյանց, կներթափանցի նրանց հոգիները, եթե նրանք սիրեն Աստծուն այնպիսի անկաշկանդությամբ, որն անհրաժեշտ է խաղաղություն զգալու համար:
Ճշմարիտ սերը նշանակում է խաղաղություն: Առանց սիրո խաղաղություն չկա, որքան էլ փորձեք գտնել այն: Խաղաղությունը կարող է գալ միայն մեկ անձնավորության՝ մյուսի հանդեպ ունեցած սիրո միջոցով:
Երբ սերը պակասում է ձեր կյանքում, ոչ մի բան հավասարակշռված չէ, իսկ դրա փոխարեն ընդարմացում է:
Սեր գտնելու համար դուք պետք է ձեր սրտում տեղ գտնեք Աստծո համար:
Աստծուն գտնելու համար դուք պետք է ընդունեք Ինձ՝ ձեր Հիսուսին, որպես Նրա սիրելի Որդի:
Քանի որ, եթե Ինձ թույլ տաք, Ես կտանեմ ձեզ Նրա մոտ:
Երբ Ես դա անեմ, և երբ Նրա Լույսը նվաճի ձեր հոգին, ձեզ համար հեշտ կլինի սիրելի մեկ ուրիշին:
Հոգու մեջ ներկա Աստծո Սերը կբացի մեկ ուրիշի սիրտը:
Սերը փայլում է աշխարհում դժբախտության, անկարգությունների և պառակտման միջով:
Այն միակ ճանապարհն է հասնելու խաղաղության ոչ միայն ձեր անձնական կյանքում, այլև ձեզ շրջապատող աշխարհում:
Սերը բերում է խաղաղություն, բայց նրա արմատը պետք է լինի Աստծուց՝ ձեր Արարչից եկող իսկական սիրո մեջ:
Խաղաղությունը բերում է ներդաշնակություն:
Սերը մարդկային ռասայի փրկապարանն է, և առանց դրա դուք կորած եք, միայնակ, քաղցած և երբեք խաղաղություն չեք գտնի:
Ձեր Հիսուս

Ինչպես եք դուք տառապում աթեիզմի ձեր կրծքանշանի ետևում

Երկուշաբթի, 10 սեպտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 06:00

Իմ սիրելի աղջիկ, ժամանակը, որ աշխարհը վերջապես հասկանա թե Աստված գոյություն ունի, մոտ է:
Բոլոր նրանց, ովքեր հպարտանում են իրենց աթեիզմով, որը նրանք կրում են ինչպես պատվո հպարտ շքանշան, Ես ասում եմ հետևյալը:
Երբ ժամանակը գա, և երբ կարողանաք տեսնել Ճշմարտությունը որ Ես տալիս եմ ձեզ, դուք դեռևս կասկածներ կունենաք:
Իմացեք, որ ձեր կասկածները, որոնք հիմա չկան, քանի որ չգիտեք Ճշմարտությունը, անեծք են:
Այդ Սատանան է, որ սկզբում ձեզ հրապուրում է, իսկ հետո՝ անիծում:
Դուք Աստծո զավակ եք, և ձեզ կուրացրել են Ճշմարտության հանդեպ, որպեսզի արգելեն ձեզ երկրի վրա Նոր Դրախտ մտնել, որը խոստացվել է մարդկությանը Իմ Հոր կողմից:
Երբ ձեզ ներկայացվի Ճշմրտությունը, և երբ կասկածները դեռևս տանջեն ձեզ, խնդրում եմ խնդրեք Ինձ օգնել ձեզ: Ձեզ պետք է պարզապես մեկ բառ, մեկ կանչ:
Ահա թե ինչ եմ Ես ուզում, որ դուք ասեք Ինձ:

Խաչակրաց աղոթք(76) <<Աթեիստի աղոթքը>>
Հիսուս, օգնիր ինձ ընդունել Աստծո Սերը, մինչ այն ցույց է տրվում Ինձ:
Բաց իմ աչքերը, միտքը, սիրտն ու հոգին, որ կարողանամ փրկվել:
Օգնիր ինձ հավատալ՝ լցնելով Քո Սերը իմ սրտի մեջ:
Հետո պահիր ինձ և փրկիր ինձ կասկածի տառապանքից: Ամեն:

Իմ խեղճ հոգիներ, ինչպես եք դուք տառապում աթեիզմի ձեր կրծքանշանի ետևում:
Ինչպես եք դուք անընդհատ ձգտում կարծրացնել ձեր սրտերը Ճշմարտության հանդեպ՝ Աստծո գոյության Ճշմարտության հանդեպ:
Ինչպես եք դուք անընդհատ փորձում հավաքագրել հոգիներ, որ ընդունեն ձեր հավատալիքները: Ի՞նչ եք կարծում ինչու՞ եք դա անում:
Այդ ինչու՞ եք ձեր կարծիքով այդքան էներգիա և ջանք ներդնում՝ բղավելու համար ձեր հավատալիքները: Նրա համար, որ ապացուցեք, թե Աստծո գոյությունը կեղծ է:
Մի՞թե չգիտեք, որ երբ անում եք դա, ձեր ջանքերը կրքոտ են: Այդ ինչպե՞ս է որ այդպիսի կիրքը կարող է հասնել ատելության Աստծո հանդեպ:
Եթե Աստված գոյություն չունի, ուրեմն ինչու՞ եք Ատում Նրան:
Ինչպե՞ս կարող եք ատել մեկին, ով, ձեր աչքում, գոյություն չունի:
Սատանան է ձեր Աստվածը, սակայն դուք հավանաբար հավատացած եք թե նա այնուամենայնիվ գոյություն չունի:
Դուք չգիտեք, որ նա վերահսկում է ձեր միտքը և լցնում այն ստով:
Որքան եմ Ես լալիս ձեզ համար:
Որքան եմ Ես դեռևս սիրում ձեզ:
Որքան եմ Ես տենչում փրկել ձեզ քանի դեռ չափազանց ուշ չէ:
Ձեր Հիսուս

Նոր դարաշրջանը կազդարարվի Իմ Երկրորդ Գալուստով: Ժամանակը կարճ է:

Երեքշաբթի, սեպտեմբեր 11, 2012թ, երեկոյան ժ 07:30

Իմ սիրելի աղջիկ, դու վերջապես հասկացար տառապանքի ուրախությունը, երբ այն առաջարկվում է խիզախությամբ և ազատ կամքով:
Փրկված հոգիները քեզ ուրախության արցունքներ են բերում, ճիշտ այնպես ինչպես իրենք նույնպես, լցվում են արցունքներով, երբ փրկվում են դժոխքի կրակների մեջ ընկղմվելուց:
Իմացիր, որ Իմ առաքելությունը բոլոր հոգիներին փրկելն է:
Երբեք մի մոռացիր, որ Իմ Հայրը տվել է մարդկությանը նրան անհրաժեշտ սպառազինությունը՝ Իմունիտետի Շնորհի միջոցով հոգիներ փրկելու համար:
Բռնեք այն, քանի որ նրա միջոցով բոլոր հոգիները կարող են փրկվել: Պարզապես մտածեք այն հրաշալի աշխարհի մասին, որն առջևում է:
Ոչ մեկը չի սգա իր ընտանիքի որևէ անդամի՝ դժոխքի կրակներում կորչելու համար:
Դուք, Իմ հետևորդներ, զորություն ունեք ձեր աղոթքների միջոցով փակել դժոխքի դարպասները՝ հոգիներ փրկելու համար:
Թող ոչ մի մարդ չանտեսի Իմ Խոսքերը:
Մի հիասթափեցրեք մարդկանց որ չընդունեն Իմունիտետի Շնորհը, քանի որ **Ես գիտեմ, որ Իմ սրբազան սպասավորներից ոմանք փորձում են դա անել:**
Ոմանք դա անում են սխալ ուղղորդված պարտականության զգացումից, բայց նրանք սխալ են: Իմունիտետի այս Շնորհը մի Ընծա է Հայր Աստծուց:
Դուք պարտականություն ունեք, Իմ սրբազան սպասավորներ, տալ այն Աստծո զավակներին, օգնելու համար հոգիներ փրկել:
Այնքան շատ աշխատանք կա անելու Իմ Խոսքը տարածելու համար, բայց առանց բավարար ժամանակի:
Գնացեք, դարձրեք այդ ձեր առաքելությունը, Իմ աշակերտներ, տարածելու համար Իմ Խնդրական աղոթքները, հատկապես Իմունիտետի Շնորհի աղոթքը:
Նաև գնացեք և ասեք մարդկանց Կենդանի Աստծո Կնիքի և մեղքերի Բացարձակ Թողության մասին:
Դուք նախապատրաստված եք հիմա, վերցրեք ձեր զենքերը հանուն Աստծո և օգնեք Ինձ՝ ձեր Հիսուսին, փրկելու մարդկությունը:
Նոր Դարաշրջանը կազդարարվի Իմ Երկրորդ Գալուստով: Ժամանակը կարճ է:
Հիշեք, վստահեք Ինձ ամբողջապես, և Ես ձեզ կազատեմ անհանգստությունից ու վախից:
Դուք պետք է միայն հանձնվեք աղոթքի մեջ:
Առաջարկեք ձեր աղոթքները հոգիների համար, և ամեն ինչ լավ կլինի:
Ձեր Հիսուս

Կոմունիզմը, որից արևմտյան աշխարհն այնքան երկար վախենում էր, հիմա գաղտնաբար կազմավորվում է գլոբալ դաշինքի միջոցով

Չորեքշաբթի, սեպտեմբեր 12, երեկոյան ժ 06:55

Իմ սիրելի աղջիկ, Իմ մտադրությունն է՝ վերցնել բոլոր քրիստոնյա երկրներին, որոնց վրա ճնշում են գործադրում որպեսզի մերժեն Ինձ, Իմ Սուրբ Բազուկների մեջ, նրանց ուժ տալու համար:
Նրանց քրիստոնեությունը դաժան փորձության կենթարկվի ինչպես ոչ մի կրոն չի ենթարկվել:
Մյուս կրոնները չեն հալածվի այնպես, ինչպես Իմ հետևորդները ստիպված կլինեն տառապել:
Քրիստոնեության Ճշմարտությունը հարցականի տակ կդրվի: Նրա վրա կհարձակվեն և քննության կենթարկեն, բայց մեկ բան կմնա անփոփոխ:
Մեկ ճանապարհ կա դեպի Իմ Հոր Տուն: Այդ ճանապարհը Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը՝ մարդկության Փրկիչը:
Դուք չեք կարող գնալ Իմ Հոր մոտ առանց ընդունելու Իմ Գոյությունը:
Ճշմարտությունը չի կարող փոխվել, անկախ նրանից, թե որքան կմերժեք այն:
Շատ շուտով ստերը կերևան այնպիսին, ինչպիսին կան: Բոլոր կրոնները կդառնան մեկ, երբ ականատես լինեն Ճշմարտությանը:
Իմ Հոր Ուխտը՝ ուղարկել Ինձ՝ Իր միակ Որդուն, մեկ անգամ ևս, ողջ մարդկությանը Իմ Հոր Թագավորություն բերելու համար, հիմա կկատարվի:
Հենց որ Ճշմարտությունն ակնհայտ դառնա, բոլոր նրանք, ովքեր դեռևս կասկածի մեջ կլինեն, կշրջեն իրենց մեջքը:
Ես աղերսում եմ ձեզ, Իմ աշակերտներ, ասեք հիմա նրանց Ճշմարտությունը:
Նրանք չեն լսի, բայց Նախազգուշացումից հետո կլսեն:
Հիմա պատերազմը քրիստոնեության դեմ սկսում է ուժեղանալ:
Ես կոչ եմ անում բոլոր քրիստոնյաներին պաշտպանել Իմ՝ ձեր Հիսուսի հանդեպ ձեր հավատարմության իրավունքը: **Եթե չպաշտպանեք, դուք կխեղդվեք, և ձեզ կստիպեն կուլ տալ կոմունիզմի սուտը:**
Կոմունիզմը, որից արևմտյան աշխարհն այդքան երկար ժամանակ վախենում է ը, հիմա ամենուր գաղտնաբար կազմավորվում է գլոբալ դաշինքի միջոցով բոլոր կառավարություններում:
Ձեր ազգերի մեջ նրանք, ովքեր իրենց օպոզիցիան էին բղավում ինչպես իրենք էին կոչում՝ չար ռեժիմի դեմ, նրանք հիմա կգրկեն կոմունիզմը:
Այդ ժամանակ նրանք կվերահսկեն այն ամենն ինչ դուք անում եք. Ձեր կերածը, ձեր աշխատածը, բնակարան ունե՞ք ապրելու համար, թե ոչ, և կարո՞ղ եք գործադրել ձեր կրոնը թե ոչ:
Երբեք տեղի չտաք: Երբեք հույսը չկտրեք: Ձեր զորությունը կարևոր կլինի ճնշման այդ ժամանակահատվածի ընթացքում: Աղոթքը կլինի ձեր զենքը և կօգնի ձեզ դիմանալ:
Իմ աշակերտները պետք է վստահեն Ինձ: Ես թույլ չեմ տա, որ դուք երկար տառապեք:
Ես կպահեմ ձեզ, և դժվար ժամանակահատվածը սահուն կլինի:
Ձեր Հիսուս

Իմ Հավիտենական Հոր Ընծան՝ Իր յուրաքանչյուր զավակին ամենակատարյալ կյանքը ամենակատարյալ աշխարհում տալն է

Հինգշաբթի, 13 սեպտեմբերի, 2012թ., առավոտյան ժ 10:45

Իմ սիրելի աղջիկ, ուրիշների աղոթքի պատճառով մի ուղենիշ է հաղթահարվել Իմ Սուրբ Խոսքն արագորեն տարածելու Իմ Առաքելության մեջ:
Իմ թանկագին և շատ սիրված հետևորդների կողմից բարեխղճորեն ասվող այդ աղոթքներն այնքան զորեղ են, որովհետև դրանք ասվում են սրտանց:
Ես մեծ Շնորհներ եմ շնորհում Իմ աշակերտներին, որպեսզի նրանք կարողանան առաջ գնալ և ցած տապալել խոչընդոտները, որոնց նրանք կհանդիպեն այս Առաքելության միջոցով հոգիներ փնտրելու համար իրենց ընթացքի մեջ:
Իմ սիրելի աշակերտներ, իմացեք, որ Երկնքի հրեշտակներն ուղղություն են ցույց տալիս ձեզ, պաշտպանում են ձեզ և առաջնորդում դեպի Իմ նպատակը՝ աշխարհը դարձի բերելու նպատակը:
Ձեզնից շատերը, ովքեր նոր են /սկսել կարդալ/ Իմ Պատգամները կզարմանան՝ մտածելով, արդյո՞ք այս Խոսքերը պարզապես ուղղություն տալու համար են, թե՞ մարդկանց դարձի բերելու:
Դրանք տրվում են այդ երկուսի համար էլ, բայց, ամենակարևորը, բոլորին փրկելու համար, որպեսզի յուրաքանչյուր ոք կարողանա ապրել աշխարհում Խաաղաղության Նոր Դարաշրջանում: Քանի որ սա է Իմ խոստումը: Սա է մեծ Ընծան:
Իմ Հավիտենական Հոր Ընծան՝ Իր յուրաքանչյուր զավակին ամենակատարյալ կյանքը ամենակատարյալ աշխարհում տալն է այն ձևով, ինչպես այն նախատեսված է եղել ամենասկզբից ի վեր:
Ոչինչ չի խանգարի, ոչ էլ կարող է խանգարել, որ այդ Նոր Դրախտը երկրի վրա ներս մտնի:
Այն կբարձրանա այն զորշ անառակ աշխարհից, որտեղ դուք ապրում եք, որն ընկղմված է Սատանայի կողմից ստեղծված արատավոր փչացածության մեջ: Այնքան նեխած է վարակվածությունը, որ շատ քչերն են ճանաչում Ճշմարտությունը:
Նրանք չգիտեն չարի ու բարու տարբերությունը: Շատերը շփոթում են այդ երկուսը:
Երբ մարդիկ ընդունում են չարիքը որպես իրենց կյանքի մի մաս և արդարացնում նրա ներկայությունը, նրանք մերժում են Աստծո Խոսքը: Սակայն միայն Աստծո Խոսքի Ճշմարտությունն ընդունելու միջոոցով է որ ՈՒխտը՝ վերջնական ՈՒխտը, կարող է կատարվել:
Մարդկության վերջնական փրկության պլանը հաջողությամբ է պսակվում, բայց դեռևս անցնելու ճանապարհ կա նախքան Ես կկարողանամ փրկել այն բոլոր հոգիներին, ովքեր դեռևս Իմ հասանելիությունից դուրս են:
Միայն Ճշմարտությունը կբացի նրանց աչքերը:

Միայն Ճշմարտությունը, եթե նրանք ընդունեն այն, ազատ կարձակի նրանց, այնպես որ նրանք կարողանան մտնել Նոր Դրախտի դարպասներից:
Ձեր Հիսուս

Գլոբալ ատելությունը դուրս է ժայթքում ազգերի միջև այս ժամանակ, և այդ ամենն Աստծո Անունով

Կիրակի, 16 սեպտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 01:45

Իմ սիրելի աղջիկ, գլոբալ ատելությունը դուրս է ժայթքում ազգերի միջև այս ժամանակ, և այդ ամենը՝ Աստծո անունով:
Որքան քիչ գիտի մարդկությունը Աստծո ճանապարհերը, որոնք այնքան հեռու են ատելությունից:
Ատելությունը չի կարող գալ Աստծուց: Ատելությունն օգտագործվում է Սատանայի կողմից՝ վիրավորելու համար Աստծո Խոսքը:
Սատանան օգտագործում է կրոնը՝ատելությանը թողություն տալու համար:
Ատելությունը շատ ձևեր է ընդունում, և ներկայացվում է մի քանի ճանապարհով՝ խորամանկորեն մշակված Սատանայի կողմից, և դրվում է մարդկության մտքերի մեջ:
Ատելությունը կարող է օգտագործվել՝ համոզելու համար ուրիշներին ընդունել ստեր մեկ այլ մարդու մասին, որպեսզի խրախուսեն ատելություն և լարվածություն:
Ատելությունը կարող է օգտագործվել՝ ստեղծելու համար կրոնական բաժանում և բռնության առաջացում՝ Աստծո Խոսքի դեմ հայհոյություն անելու միջոցով:
Երբ մարդկությունն օգտագործում է ատելությունը՝ արդարացնելու համար ինչ-որ մեկի հավատքն Աստծո հանդեպ, նրանք մեղանչում են Աստծո առաջ ամենաչար ձևով:
Ատել մեկ ուրիշի Աստծո անվամբ՝ հակասություն է, քանի որ միայն սեր կարող է գալ Աստծուց:
Ատելությունը գալիս է միայն Սատանայից:
Ընտրությունը պարզ է: Կամ ընտրում եք Աստծուն և ապրում ձեր կյանքն ըստ Նրա Կանոնների, կամ էլ ընտրում եք Սատանային և այն ստերը, որոնք նա օգտագործում է մարդկությանը քայքայելու և հոգիներ գողանակու համար:
Ձեր Հիսուս

Նախազգուշացում այն գլոբալ էլիտար խմբերին, որոնք իրենց հզոր դաշինքի միջոցով դավեր են նյութում՝ վերահսկելու ազգերին

Կիրակի, 16 սեպտեմբերի, 2012թ., երեկոյան ժ 10:50

Իմ սիրելի աղջիկ, սա նախազգուշացում է այն գլոբալ էլիտար խնբերին, ովքեր իրենց հզոր դաշինքի միջոցով նյութում են վերահսկել բոլոր ազգերին:
Դուք, ում Աստվածը Սատանան է, իմացեք, որ ձեր հոգիները սևացած են չարի ամպով, որը ներարկվել է ձեր մեջ չարի կողմից:
Դուք մեծ վտանգի մեջ եք, չնայած դրան, ընտրում եք պաշտել սատանային, ով ցանկանում է գողանալ ձեր հոգիները և տանջել ձեզ հավիտենությունը:
Աստծո զավակների դեմ բռնանալու, կառավարելու, վերահսկելու և գենոցիդ մտահղանալու ձեր պլանները ոչ միայն կխափանվեն Իմ Հոր Ձեռքով, այլև այդ չարիքը կշրջվի ձեր դեմ:
Դուք դաժանորեն կպատժվեք ձեր չարության համար:
Մեղքերը, որոնց մեջ մեղավոր եք, ատելի են Ինձ, և այդ մարդկանց հանդեպ ձեր ատելությունն ու արհամարհանքը, նրանց հանդեպ ում հայտարարում եք թե ծառայում եք ձեր կառավարություններում, ձեզ կոչնչացնի հավիտյան:
Այն կարճ ժամանակը, որը կվայելեք երբ կխլեք ազգերի վրա կառավարելու սանձերը և կներմուծեք մի չար դիկտատուրային ռեժիմ, ձեզ կբերի հավիտենական կյանք դժոխքում:
Ձեզ բազմաթիվ հնարավորություններ կտրվեն, որ շրջեք ձեր մեջքը էլիտար ուժերի չար խմբի հանդեպ: Բայց զգույշ եղեք, քանի որ ձեզ կտրվի միայն այդքան ժամանակ:
Երբեք մի թերագնահատեք Աստծո Զորությունը: Մի թերագնահատեք Նրա Զայրույթը:
Քանի որ մինչ Նա Գթասրտության Աստված է, Նրանից՝ Աստծուց, Իմ Հավիտենական Հորից, պետք է նաև վախենալ:
Նրա զորությունն ամենակարող է: Նրա զորությունը Սատանայի հանդեպ շուտով կհասնի գագաթնակետին, և Նա կրակի լճերի մեջ կնետի Գազանին ու նրա զինակիցներին:
Դուք նույնպես կնետվեք դժոխք, եթե շարունակեք ոչնչացնել Աստծո Արարչությունը՝ Աստծո զավակներին:
Իմ Հայրը երբեք չի ների ձեզ, եթե անցնեք Նրա Մեծ Գթասրտության սահմաններից այն կողմ:
Այն օրը, երբ Ես կգամ դատելու, դուք կդողաք մարդկությանը անծանոթ ամենախորը վախով:
Այդ օրը ձեզ կտրվի այն պատիժը համապատասխան նրան, թե ինչպես եք վարվել ձեր եղբայրների ու քույրերի հետ՝ Աստծո զավակների հետ:
Ձեզ նախազգուշացվում է: Քանի որ Աստծո Զայրույթից պետք է վախենալ:
Ձեր Հիսուս

Մի բողոքական ազգ՝ ՄԵԾ Բրիտանիան, շուտով դարձի կգա դեպի Իմ Ուղիները

Երկուշաբթի, 17 սեպտեմբերի, 2012թ., երեկոյան ժ 09:15

Իմ սիրելի աղջիկ, Ես ցանկանում եմ բացահայտել քեզ մի հրաշք, որը պլանավորել եմ:
Մի բողոքական ազգ՝ Մեծ Բրիտանիսն, շուտով դարձի կգա դեպի Իմ Ուղիները, Իմ Ուսուցումներն ու Ճշմարտությունը:
Քանի որ այնքան երկար ժամանակ է ինչ այդ քրիստոնյա երկիրն ընդունել է ու փոփոխել Աստծո Օրենքները՝ հարմարեցնելու համար դրանք իր հպարտ ուղիներին:
Երբեմնի մեծ քրիստոնեական երկիր, նրանք դարեր շարունակ մեղանչել են Աստծո Օրենքների առջև և համոզել իրենք իրենց, որ հետևել են երկրի վրա Իմ Եկեղեցու կողմից դրված Օրենքներին:
Նրանց մեջի հավատարիմների աղոթքները, նաև Մեծ Բրիտանիայում քրիստոնյա առաջնորդների կողմից ցույց տրված սերն ու հավատարմությունը ձախորդությունների ժամանակ, նրանց մոտեցրել են Իմ Սուրբ Սրտին:
Այդ երկիրը դարձի կգա, և Ճշմարտությունը կփրկի միլիոնավորների:
ՀԱկաքրիստոսն ու նրա շատ հետևորդները այս երկրում իշխանություն ունեցողներից շատերի վրա են ազդել, բայց նրանք չեն կարողանա գողանալ Աստծո զավակներին:
Իմ հետևորդները կմիավորվեն Բրիտանիայի բոլոր եկեղեցիներով մեկ, և Ես կպարուրեմ նրանց Իմ Սուրբ Բազուկների մեջ:
Նրանք կդառնան մի հզոր ուժ Իմ բանակում, և նրանց միավորման պլանն արդեն սկսվել է:
Ահա մ ի յուրահատուկ խաչակրաց աղոթք Բրիտանիայում Աստծո զավակների համար:

Խաչակրաց աղոթք (77) Մեծ Բրիտանիայի համար

Ով Երկնավոր Հայր՝ Աստված, Արարիչ մարդկանց, խնդրում եմ, լսիր իմ աղոթքը:
Ես աղերսում եմ Քեզ փրկել Բրիտանիան չարի և բռնապետության ճանկերից:
Ես խնդրում եմ, որ Դու միավորես մեզ բոլորիս, բոլոր կրոններին, հավատամքներին ու գույներին որպես մեկ ընտանիքի Քո Աչքում:
Տուր մեզ զորությունը՝ միավորվելու ցանկացած օրենքի դեմ, որ կներմուծվի՝ դուրս մղելու համար Քո Ուսուցումները:
Տուր մեզ զորությունն ու քաջությունը՝ երբեք չլքել Քեզ և մերա ղոթքների միջոցով օգնել փրկելու Քո բոլոր զավակներին:
Միավորիր իմ բոլոր եղբայրներին ու քույրերին՝ հարգելու մեզ հավիտենական կյանք բերելու և Քո Դրախտը մտնելու Քո խոստումը: Ամեն:

Մեծ Բրիտանիայի զավակներին՝ իմացեք, որ շուտով դարձը, որ կպարուրի ձեր երկիրը, կբերի ձեզ մեծ շնորհներ:
Հետո դուք կօգնեք առաջնորդելու Իմ բանակը մյուս ազգերի հետ դեպի Իմ Փառապանծ Թագավորություն:
Ձեր Հիսուս

Մարդու Որդին այնպիսին չէ, ինչպես մարդիկ են ակնկալում /որ նա լինի/: Ես ազատ եմ պայմանականություններից

Երեքշաբթի, 18 սեպտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 05:40

Իմ սիրելի աղջիկ, այս առաքելությանը հետևող Իմ հետևողների համար սա բավականին դժվար ճամփորդություն էր:
Նրանց ծաղրում են այն մարդիկ, ում կարծիքը նրանք գնահատում են:
Նրանց ծաղրու մ են այն մարդիկ, ովքեր հայտարարում են, թե իրենք հոգևորապես ավելի հասուն են, և նրանց վրա թքում են այն մարդիկ, ովքեր մերժում են ԻՆՁ՝ Հիսուս Քրիստոսին:
Նրանք պետք է ընդունեն Փշե Պսակը և այ խոնարհությունը, որն անհրաժեշտ է՝ կրելու համար տառապանքի ցավը հանուն Իմ Սուրբ Անվան:
Թող ոչ մի մարդ չթերագնահատի դեպի հավիտենական փրկություն տանող փշոտ ճանապարհը:
Եթե դիմանաք տառապանքին, ապա արագորեն կմաքրագործվեք, իսկ հետո ի վիճակի կլինեք օգնելու մյուսներին, որոնց մաքրագործումը տեղի չի ունենա մինչև Նախազգուշացումը:
Կլինեն պահեր, Իմ սիրելի աշակերտներ, երբ ուրիշների կողմից, ովքեր ցանկանում են որ դուք լքեք Իմ առաքելությունը, ստեր կսերմանվեն ձեր մտքի մեջ:
Դուք պարզապես պետք է մնաք հաստատուն, հարգալից և հետո լուռ մնաք, երբ կանգնեք այդպիսի հալածանքի դեմ:
Երբեք չվիճեք ոչ էլ փորձեք ապացուցել Իմ Սուրբ Խոսքի ճշմարտացիությունը, քանի որ թակարդը կընկնեք, իսկ հետո՝ ցած կգլորվեք: Այդ ժամանակ է, որ ձեզ կհարվածեն, և ձեզ համար դժվար կլինի առաջ շարժվել՝ Իմ Սուրբ Խոսքը տարածելու համար: Այլ խոսքով՝ դուք կընկնեք: Հետո կգա շփոթությունը, և որոշ դեպքերում, դուք ձեր մեջքը կշրջեք Իմ հանդեպ:
Իմ հետևորդներից շատերը, ովքեր վերցրեցին իրենց խաչը՝ հետևելու համար Ինձ այս առաքելության մեջ հոգիներ փրկելու համար, չկարողացան շարունակել իրենց դժվար ճանապարհը:
Ոմանք թույլ տվեցին, որ ուրիշները կասկածի սերմեր ցանեն իրենց մտքերի մեջ:
ՄՅուսները հավատացին այն ստերին, որոնք ասվեցին մերժելու համար այս **Իմ վերջին սուրբ առաքելությունը երկրի վրա՝ նախապատրաստելու մարդկությանը Իմ Երկրորդ Գալուստին:**
Միայն նրանք, ովքեր պարզ սեր ունեին Իմ հանդեպ, ովքեր խորը հավատարմություն ունեին և հասկանում են տառապանքի դերը հոգիների փրկության գործում, միայն նրանք ունեցան կորովը՝ շարունակելու:
Հեշտ չէ Ինձ հետևել՝ ձեր Հիսուսին: Մինչ հետևում եք Իմ ուսուցումներին, դա բերում է ձեզ ավելի մոտ Իմ Սուրբ Սրտին, բայց միայն այն ժամանակ, երբ դուք հանձնվում եք այն

իրականությանը որ Խաչն է, միայն այդ ժամանակ կարող եք իսկապես ձեզ կոչել Իմ աշակերտը:
Շատ խեղճ հոգիներ են հավատում, թե իրենք կստանան մեծ ուժ, մեծ փառք և ճանաչում աշխարհում, երբ պատասխանում են Իմ Կանչին: Դա այդպես չէ:
Ես մի տառապող զոհ եմ, և այդտեղ է Իմ զորությունը Սատանայի նկատմամբ:
Մարդու Որդին այնպիսին չէ, ինչպես մարդիկ են ակնկալու /որ նա լինի/: Ես ազատ եմ պայմանականություններից: Ես ընտրում եմ անարժան հոգիների՝ Իմ պատգամները հանձնելու համար:
Ես կանչում եմ ամենաաղքատներին, ամենախոնարհներին, և ամենամեծ մեղավորներին, որովհետև Ես կարիք ունեմ ձեզ ցույց տալու, որ դուք բոլորդ հավասար եք Իմ Աչքում: Բայց միայն նրանք են, ովքեր կընդունեն որ միայն Իմ Աչքում մտքով և հոգով խոնարհներն են, որոնց Ես կգրկեմ, և արագորեն կքայլեն դեպի հոգևոր կատարելություն:
Տառապեք հանուն Իմ Անվան, և Ես ձեզ վեր կբարձրացնեմ փառքով Նոր Դրախտի մեջ:
Ընդունեք Իմ Աստվածայնության Ճշմարտությունը, որ Ես երբեք չեմ բարձրացնի Ինքս Ինձ Իմ ճշմարիտ մարգարեների միջոցով, ոչ էլ նրանք կփնտրեն փառք Իմ Անվամբ:
Հիմա, եկեք Ինձ մոտ վստահությամբ և համձնումով, որպեսզի Ես կարողանամ դարձնել ձեզ Իմը:
Ձեր Հիսուս

Սկզբում տեղի է ունենում դարձը: Հետո՝ հալածանքը: Հետո՝ փրկությունը: Այդ հերթականությամբ

Չորեքշաբթի, 19 սեպտեմբերի, 2012թ., երեկոյան ժ 08:45

Իմ սիրելի աղջիկ, մի մեծ տեղաշարժ է տեղի ունենում, աշխարհում հիմա, և Իմ Գթասրտության Լույսը մոտենում է:
Թող ոչ մի մարդ չհավատա, թե այն, ինչ Ես ասել եմ որ կլինի, տեղի չի ունենա:
Ես խոսում եմ միայն Ճշմարտությունը, ուստի դուք պետք է վստահեք Ինձ:
Իմ Սուրբ Հոգին արագորեն իջնում է մարդկության վրա հիմա՝ նախապատրաստելու նրան Իմ Մեծ Գթասրտության համար:
Թող բոլորը նախապատրաստվեն կամ տարածեն Իմ Խոսքը, որպեսզի հոգիները կարողանան փրկվել:
Ամեն ինչ լավ է հիմա, աղջիկս, այն առումով, որ ամեն ինչ տեղում է, **որպեսզի Իմ Խոսքը տարածվի վայրի ծաղկի նման, որը արմատ է գցում ամեն ազգի մեջ:**
Սիրո Իմ Ընծայի քաղցր բույրը զգում են նույնիսկ նրանք, ովքեր քիչ հավատ ունեն:
Քանի որ նրանք գիտակցում են փոփոխությունը և տեղաշարժը, բայց չեն հասկանում

թե ինչ է տեղի ունենում:
Ասա նրանց, որ Տեր Աստվածը՝ Գթասրտության Թագավորը, նախապատրաստվում է վերադառնալ երկրորդ անգամ նրանց փրկելու համար:
Իմ Ուխտը մոտենում է այն էտապին, երբ առաջին հերթին տեղի է ունենում դարձ: Հետո՝ հալածաբքը: Հետո՝ Փրկությունը: Այս հերթականությամբ:
Վստահեք Ինձ և նախապատրաստվեք, քանի որ մարդկության մեծ մասի դարձի ժամանակը մոտ է:
Շատ խոչընդոտներ են դրվում ձեր առջև, Իմ հետևորդներ: Ահա թե ինչ պետք է անեք: Ուղիղ քայլեք: Եկեք դեպի Ինձ ճանապարհով և մնացեք արժանապատիվ անկախ նրանից, թե ինչ վիրավորանքներ են թափվում ձեզ վրա: Այդպես անելով, և չխոսելով գազանի հետ, ով աշխատում է ուրիշների միջոցով ստիպել ձեզ կասկածելու ձեր հավատին, դուք պարտության եք մատնում նրան:
Ահա թե ինչու Ես մնացի լուռ և հազիվ թե պատասխանեցի Ինձ մեղադրողներին, Ինձ մահվան դատապարտողներին: Քանի որ պատասխանելը ուժ կտար Սատանային: Իմ մահը ոչնչացրեց այն զորությունը, որը նա ուներ Աստծո զավակների վրա: Այդ ժամանակ նա կորցրեց բոլոր հոգիներին գողանալու զորությունը: Հիմա, երբ Ես գալիս եմ նորից, շատ շուտով նա կկորցնի ամբողջ ուժը: Բայց մինչ այդ նա կշարունակի հոգիներ գողանալ:
Ուժեղ եղեք: Հանդարտ եղեք: Քաջ եղեք: Ես ձեզ հետ եմ: Երբ հանձնում եք ձեր կամքը և ամբողջապես վստահում Ինձ՝ դուք ապահով եք:
Ձեր Հիսուս

Հայր Աստված. Իմ Որդու ժամանակը միանում է ձեր ժամանակին, և շուտով բոլորը կդառնան մեկ

Հինգշաբթի, 20 սեպտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 06:25

Իմ սիրելի աղջիկ, ինչպես եմ Ես տենչում բռնել Իմ զավակներին Ինձ մոտիկ, որպեսզի կարողանամ ցույց տալ նրանց, թե իրենք որքան շատ են սիրված:
Այնքան շատ են Իմ զավակներից ցրված աշխարհով մեկ, սակայն շատ քչերն են ճանաչում իրենց Հորը, իրենց Արարչին:
Նրանց, ովքեր չեն ճանաչում Ինձ, նրանց պետք է ասվի որ Ես չեմ լքի իրենց:
Ես կբարձրանամ չարի ուժերի, ստերի թագավորի, գազանի դեմ և կվերացնեմ այդ սոսկալի խարազանի գոյությունը:

Միայն երբ չարության ծանրությունը ետ քաշվի, այդ ժամանակ Իմ զավակները կկարողանան տեսնել Ճշմարտությունը:
Զավակներս, մի անհանգստացեք, որովհետև ձեր աղոթքները դիպչում են Իմ Սրտին, և ձեր խնդրանքների միջոցով Ես Իմ զավակներից շատերին կփրկեմ, ովքեր խավարի մեջ են:
Իմ առաքելությունը՝Իմ սիրելի Որդուն ուղարկել՝ պահանջելու համար Իր Թագավորությունը, հիմա լավ հաստատված է, չնայած շատերը կարող է չգիտակցեն դա:
Իմ Որդու ժամանակը միանում է ձեր ժամանակին, զավակներս, և շուտով բոլորը կդառնան մեկ:
Նոր Դրախտի ժամանակը ֆիքսվել է, և ամեն ինչ պատրաստվել է Իմ զավակների նոր տան՝ նոր աշխարհի համար:
Ես կանչում եմ ձեզ Երկնքից՝ կոչ անելու ձեզ որ վստահեք Իմ Որդուն, Նրա մեծ Գթասրտությանն ու խոստումին՝ իրականացնելու այդ ուխտը:
Հեռացրեք բոլոր կասկածները, որոնք կարող են առաջանալ, քանի որ դրանք փակում են ձեզ ճշմարիտ խաղաղություն փնտրել:
Նրանք փակում են Իմ Շնորհների /ճանապարհը/, որոնք ես ցանկանում եմ հեղել ձեզ վրա՝ պաշտպանելու համար մնացած վերջին էտապից, երբ Սատանան վերահսկում է աշխարհը: Նրա ժամանակը սպառվելու մոտ է: Հետո նոր սկիզբը կծավալվի:
Ես սիրով սպասում եմ Իմ զավակների վերադարձին դեպի Իմ Թագավորությունը՝ Նոր Դրախտի Թագավորությունը: Դա այն է, ինչ պետք է լինի:
Ես սիրում եմ ձեզ: Վստահեք Ին Որդուն և սպասեք Իմ Կանչին:
Ձեր Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Աստծո Մայր. Կանխասացվել է, զավակս, որ այս ժամանակներում, որ դուք եք ապրում, մարդկության սրտերը կարծրացած կլինեն

Ուրբաթ, 21 սեպտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 03:35

Զավակս, որքան արագ է մարդկությունը կեղծ թագավորներ, կեղծ աստվածներ կռապաշտելու մեջ:
Այսօր աշխարհում ոչնչի մասին չեն մտածում, բացի կեղծ կուռքեր գրկելուց և մեղք

չունեն իրենց սրտում, երբ մերժում են միակ ճշմարիտ Աստծուն:
Կանխասացվել է, զավակս, որ այս ժամանակներում որ ապրում եք հիմա, մարդկության սրտերը կարծրացած կլինեն:
Նրանք կմերժեն նույնիսկ իրենց ընտանիքը հաճույքի ետևից ընկած:
Նրանք կմերժեն աղքատության մեջ գտնվողներին և նրանց ովքեր սովամահ են լինում, մինչ գործադրում են ամեն տեսակի հետաքրքրություն սեփական անձի հանդեպ և կատարում շատակերության մեղքը:
Այդ օրերը ձեզ վրա են, զավակներս: Մինչ մարդկային ռասան անօգնական թափառում է շփոթության մեջ, ուր ոչինչ բավականություն չի պատճառում, նրանք կբռնեն ամեն ինչ, որ իրենց հավատացմամբ կլրացնի դատարկությունը: Այդ դատարկությունը գոյություն ունի, որովհետև նրանք չեն հետևում Ճշմարտությանը կամ հավատարմություն ցուցաբերում Իմ սիրելի Որդուն:
Նրանք ոչ միայն կռապաշտում են կեղծ աստվածների, նրանք հավատարմություն են ցույց տալիս այն խեղճ հոգիներին, ովքեր աջակցում են մեղքին, ասես այն ոչ մի հետևանք չունի:
Իսկ երբ այսօր աշխարհում նրանց ներկայացնում են ստեր Իմ Որդու մասին, նրանք արագ են այդ ոչ ճշմարտություններն ընդունելու մեջ:
Ընդունված է ծաղրել Իմ Որդուն, բայց երբ այլ ուսմունքներ, որոնք չեն պարունակում Ճշ մարտությունը, քննադատվում են, մարդիկ կծկվում են վախից: Նրանք չեն վախենում Իմ Որդուց:
Նրանք չեն վախենում միակ Ճշմարիտ Աստծուց, որովհետև չեն սիրում Նրան: Նրանց սրտերը փակ են:
Նրանք շարունակում են հետևել մի ճանապարհի, որը նրանց սփոփանք չի բերում: Դրա փոխարեն այդ ճանապարհը թողնում է նրանց չբավարարված և դատարկ:
Ինչպես եմ Ես լալիս, երբ տեսնում եմ նրանց շփոթմունքը: Ինչպես եմ լալիս Իմ Որդու համար, երբ Նրան այդքան վիրավորում են արհամարհանքով: Նրա, ով այդքան շատ տառապեց նրանց համար և մեռավ այդպիսի չարչարանքով: Սակայն նրանք դեռևս չեն էլ հասկանում Խաչի վրա Նրա Մահվան նշանակությունը:
Միայն այն ժամանակ, երբ մարդ ընդունում է Հիսուսին՝ Քրիստոսին՝ Ճշմարիտ Մեսիային, այդ ժամանակ նա խաղաղություն կգտնի:
Շուտով Իմ Որդին կներկայացնի նրանց այն ապացույցը, որը պահանջում են: Երբ նրանց ցույց տրվի ապացույցը, նրանք ստիպված կլինեն կատարել վերջնական ընտրությունը:
Նրանք կամ կընտրեն Իմ Որդուն և Ճշմարտությունը, կամ էլ կընդունեն խաբեբայի կողմից իրենց տրվող ստերը:

Աղոթեք, զավակներս, որ սրտերը բացվեն և որ Իմ Որդու սերը կարող դարձնի Աստծո բոլոր զավակներին ընդունել Նրա Գթասրտության Ձեռքը:
Ձեր սիրող Մայր
Մայր Փրկության

Նրանք կասեն, թե Ես ամուսնացած եմ եղել: Նրանք կասեն, թե Ես պարզապես մի մարգարե եմ եղել:

Հինգշաբթի, 20 սեպտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 03:16

Ես քո Միստիկ Ամուսինն եմ, և որպես այդպիսին, դու կշարունակես տառապել՝ հոգիներ փրկելու համար:
Իմ սիրելի աղջիկ, արդեն եկել է ժամանակը, որ Իմ մասին ստեր տարածվեն աշխարհով մեկ:
Ինչպես քեզ նախկինում ասել եմ, նրանք ստեր կհորիներ և կեղծիքներ կստեղծեն Իմ՝ Հիսուս Քրիստոսի մասին, որպեսզի կարողանան ժխտել Իմ Աստվածայնությունը:
Իմ Աստվածայնությունն Ամենակարող է:
Ես եկա մարմնով և խոնարհեցի Ինքս Ինձ մի այնպիսի ձևով, որը մարդիկ չընդունեցին:
Ես չեկա որպես թագավոր հագնված:
Ես չբղավեցի ոչ էլ պարծեցա ինչպես մի թագավոր, որպեսզի ուրիշները ծնկի գան Իմ Ոտքերի առջև:
Ես չհրամայեցի որ Ինձ սպասարկեն:
Դրա փոխարեն, Ես եկա, որ ծառայեմ:
Ես եկա, որ խնդրեմ ձեր փրկությունը: Դա անելու համար Ես պետք է խոնարհեցնեի Ինքս Ինձ՝ դառնալով մարդ, մի խեղճ մարդ, խոնարհ ծագում ունեցող:
Չնայած Ես եկա որպես մարդ, դա չէր նշանակում որ Իմ Աստվածայնությունը ինչ-որ ձևով վարկաբեկվել էր: Ես ծնվեցի առանց մեղքի: Ինձ համար անհնար էր մեղք գործել: Ես ունեցել եմ մարմնի նույն ցանկություններն, ինչ մարդը, բայց Ես երբեք մեղք չեմ գործել, քանի որ դա չէր կարող լինել: Ես մաքուր էի մտքով, մարմնով և հոգով:
Ես նման էի մարդուն այնքան շատ ձևերով: Բայց Ես բարձրացա մեռածներից:
Ստերը, որոնք կգան, ուր կսկսեն ժխտել Իմ Գոյության Ճշմարտությունը մի շարք ոչ ճշմարտությունների միջոցով, կսկսեն հեղեղել երկիրը:
Նրանք կասեն, որ Իմ Մարմինը դեռևս կարելի է գտնել: Նրանք կասեն, թե Ես ամուսնացած եմ եղել: Նրանք կասեն, թե Ես պարզապես մի մարգարե եմ եղել: Հետո

մեկ անգամ ևս կփորձեն ապացուցել, թե Ես հերձված եմ եղել: Թե Ես հայհոյել եմ Աստծո դեմ: Նրանք կծաղրեն Իմ Խոսքերը որ տրվում են աշխարհին հիմա, իսկ հետո կհեռացնեն Ինձ:
Նրանք դա անում եմ երկու պատճառով: Առաջինը, որ պղծեն Իմ Աստվածայնությունը և ներկայացնեն Ինձ որպես սոսկ մի մարդ: Եկրորդը, որպեսզի կասկած առաջացնեն որպես Մեսիա Իմ դերի հանդեպ:
Ինչպես են նրանք վիրավորում Իմ Անունը:
Ինչպես են նրանք շփոթեցնում Իմ հետևորդներին:
Մի լսեք ստերին:
Մի լսեք, երբ փորձում են ձեզ համոզել, թե Աստված չի ստեղծել տիեզերքը:
Քանի որ այդ բոլոր ուշադրության շեղումները նախատեսված են ձեր հավատը թուլացնելու և ձեր հոգիները գողանալու համար:
Փակեք ձեր ականջները այդպիսի չարության համար: Փակեք ձեր աչքերը ոչ ճշմարտությունների դեմ, քանի որ ամեն ջանք կարվի ձեզ համոզելու, որ Ես Մեսիան չէի՝մարդկության Փրկիչն ու Ազատարարը չէի:
Որքան կույր են նրանք:
Որքան քիչ գիտեն նրանք:
ՁԵր Հիսուս

Կեղծ մարգարեները պատրաստ են հիմա, և նրանք կցատկեն այս առաքելության վրա

Երկուշաբթի, 24 սեպտեմբերի. 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, Ես պետք է նախազգուշացնեմ քեզ կեղծ մարգարեների մասին, ովքեր կփորձեն միջամտել այս առաքելությանը:
Այնքան շատ խեղճ մոլորված հոգիներ են մոլորության մեջ գցվում չարի կողմից, ովքեր հավատում են թե իրենք ստանում են աստվածային պատգամներ:
Նա անում է դա՝ խայծ դնելով այդ հոգիների սերն Իմ հանդեպ, և հատկապես թիրախ է դարձնում սուրբ, նվիրված հոգիներին:
Ցանկացած մարդ, ով ձեզ կասի, թե պատգամ ունի Երկնքից, որը հրահանգ կտա փոխել կամ լրացնել Ինձնից եկած որևէ պատգամ, ստախոս է:
Սա այն ձևը չէ, որով Ես իրավասություն եմ տալիս հաղորդակցությանը Երկնքից:
Միակ պատգամները, որոնք Ես թույլ եմ տալիս որ մի տեսանողից փոխանցվի մյուսին՝ օժանդակության և սիրո պատգամներն են, բայց միայն այն ժամանակ, երբ դա անհրաժեշտ է:

Իսկական մարգարեների կամ ընտրյալ հոգիների կողմից ստացված պատգամները կամ ճշմարիտ են, կամ կեղծ:
Չկա միջանկյալը: **Երկինքը երբեք չի ուղարկի մի պատգամ, որը հակասի մեկ այլ պատգամի, որ ստանում է մի ընտրյալ հոգի Երկնքից:**
Զգուշացեք կեղծ մարգարեներից: Նրանք, ովքեր չեն հասկանում, որ իրենք կեղծ են, սարսափելի վնաս են պատճառում, երբ միջամտում են Իմ Սուրբ Խոսքին: Դու, աղջիկս, չպետք է ներգրավվես նրանց մեջ, ովքեր ասում են թե գալիս են Իմ Անունով, մինչև Ես չասեմ քեզ այդ մասին:
Կեղծ մարգարեները պատրաստ են հիմա, և նրանք կցատկեն այս առաքելության վրա: Դու չպետք է ներգրավվես նրանց մեջ:
Զգոն եղիր այդ վտանգների հանդեպ, քանի որ ամենավտանգավորը կլինի այն մարդը, ով կգա և կհռչակի իրեն, թե Ես եմ:
Թույլ տվեք ձեզ, Իմ աշակերտներ, գրավվել կեղծ մարգարեներով, և դուք հեշտությամբ կդառնաք հակաքրիստոսի և կեղծ մարգարեի զոհը:
Վստահեք Իմ Սուրբ Խոսքին: Ձեզնից շատերը դեռևս չեն կարողանում ընդունել ճշմարտությունը, և դուք կվիճեք Ինձ հետ, բայց դա օգուտ չի ունենա: Ձեր ամենամեծ քննադատությունն Իմ հանդեպ այն է, որ Ես սիրում եմ Աստծո բոլոր զավակներին, հատկապես՝ մեղավորներին:
Ես բոլորին հավասար եմ սիրում: Ձեզնից նրանք, ովքեր Ինձ մեղադրում են մեղավորների հանդեպ բարեհաճ լինելու մեջ, իմացեք հետևյալը:
Երբեք մի փորձեք շփոթության մեջ գցել ուրիշներին, ասելով, թե Հիսուսը թողություն է տալիս մեղքին: Դուք գիտեք, որ դա սուտ է: Ես ատում եմ մեղքը, բայց սիրում եմ մեղավորին:
Ձեր Հիսուս

Այնքան շատերն են փնտրում ճշմարտությունը, և չեն կարողանում գտնել այն

Կիրակի 23 սեպտեմբերի, 2012թ, առավոտյան ժ 09:00

Իմ սիրելի աղջիկ, գալիս է մի ժամանակ, երբ մարդ պետք է հարց տա իրեն. Ով եմ ես և ինչու եմ ես ապրում:
Միակ պատասխանը, որը նրան խաղաղություն է բերում, այն է երբ նա հասկանում է, որ ինքը Աստծո զավակ է:
Ճշմարտությունը մերժելու փոխարեն, այն ճնշման պատճառով, որ գործադրվում է նրանց կողմից ովքեր ծաղրում են Աստծուն հավատացողներին, մարդ պետք է

անկեղծ լինի ինքն իր հետ:
Նա գիտի, որ իր զգացած սերը գալիս է Աստծուց:
Նա գիտի իր սրտում, որ իր զգացած թշվառությունը երբ խավարի ու հուսահատության մեջ է, գալիս է մյուս կողմից: Խավարի կողմից:
Այնքան շատերն են փնտրում Ճշմարտությունը և չեն կարողանում գտնել այն:
Չնայած Ճշմարտությունը գրանցվել է Սուրբ Գրքում, շատերը չեն կարողանում ընդունել, որ Սուրբ Գրվածքները պարունակում են իրենց փնտրած բոլոր պատասխանները:
Դուք պետք է գրկեք Ճշմարտությունը և բռնեք այն թանկագին կյանքի համար, քանի որ այն փրկություն տանող ձեր ճանապարհն է:
Շատերը կանեն հնարավոր ամեն ինչ՝ մերժելու համար Ճշմարտությունը:
Հիմնականում նրանք կօգտագործեն մարդկային բանականությունը՝ Ճշմարտությունը մասնատելու համար, և կստիպեն ձեզ հավատալ ստի:
Ամեն փաստարկ կբերվի՝ մերժելու Աստծո Ճշմարտությունը: Այնքան համոզիչ կլինեն այդ փաստարկները, որ շատ հավատացողների համար դժվար կլինի պաշտպանել Ճշմարտությունը:
Ձեր հավատը կդիմանա ժամանակի փորձությանը, բայց միայն եթե թույլ տաք Ինձ ուղղություն տալ ձեզ օր ու գիշեր:
Որպեսզի Ես ձեզ ուղղություն ցույց տամ, դուք երբեք չպետք է ձեր աչքերը հեռացնեք Ինձնից, և հենվեք Ինձ վրա՝ օգնության համար:
Խոսեք Ինձ հետ: Հաղորդակցվեք Ինձ հետ օրվա ցանկացած ժամանակ՝ մեքենայի մեջ, աշխատավայրում, դպրոցում կամ եկեղեցում: Կարևոր չէ թե որտեղ, քանի որ կարող եք կանչել Ինձ ցանկացած պահի, և Ես կպատասխանեմ:
Այդ ուղին՝ Գողգոթայի ճանապարհը, Իմ հետևորդների բաժինն է: Այն մի դժվարամատչելի սար է՝ բարձրանալու համար: Դուք պետք է ընդունեք արգելքներն ու մերժման ցավը նրանցից, ովքեր չեն ընդունի ձեր կրոնն ապրելու ձեր իրավունքը:
Սարի գագաթը պետք է լինի ձեր վերջնական նպատակը: Միայն երբ հասնեք գագաթին, այն ժամանակ խաղաղություն կգտնեք:
Դիմացեք, Իմ սիրելի հետևորդներ, և դուք կզգաք Իմ Սերը այնպիսի ձևով, որ այն ձեզ անհավատալի զորություն կտա:
Ես սիրում եմ ձեզ: Ես քայլում եմ ձեզ հետ: Ես երբեք չեմ լքի ձեզ: Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ:
Ձեր Հիսուս

Նախապատրաստվեք շուտով ականատես լինելու երկնքից տրվող նշանների:

Կիրակի, 23 սեպտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 08:00

Իմ սիրելի աղջիկ, սիրով է, որ Ես խնդրում եմ Աստծո զավակներին նախապատրաստվել ականատես լինելու նշանների, որոնք շուտով կբացահայտվեն Երկնքից:
Նշանները կներկայացվեն աշխարհին տարբեր ձևերով, որպեսզի արթնացնեն Աստծո զավակներին: Շատերը կփորձեն մերժել այդ նշաները և մի կողմ հրել դրանք /անվանելով/ որպես սնոտի և հավատացյալների երևակայություն:
Նրանք, ովքեր կտեսնեն նշանները, պետք է իմանան, որ այդ նշանները կօգնեն ձեզ նախապատրաստել ձեր հոգիները: Քանի որ երբ սնուցեք ձեր հոգիները և խնդրեք թողություն ձեր մեղքերի համար, ձեր տառապանքը Նախազգուշացումից հետո կլինի նվազագույնը:
Ընդունեք այդ նշանները, այդ հրաշքները, որպես Ընծա Երկնքից:
Մի մարտնչեք դրանց դեմ, ոչ էլ անտեսեք դրանք, քանի որ դրանք Իմ Խոստումի ապացույցներն են՝ նախապատրաստելու համար ձեզ բոլորիդ նախքան Իմ Երկրորդ Գալուստը:
Գնացեք հիմա և հավատ ունեցեք:
Վստահեք Իմ՝ ձեր Հիսուսի համար հավատարմության ամենակարևոր գործողությանը:
Վստահեք Ինձ, և ամեն ինչ լավ կլինի:
Ձեր Հիսուս

Ցանկացած մարդ, ով ատում է մեկ ուրիշին նրա կրոնի պատճառով, ճշմարտապես չի սիրում Աստծուն

Երկուշաբթի, 24 սեպտեմբերի, 2012թ, վերեկվա ժ 03:55

Իմ սիրելի աղջիկ, ցանկացած մարդ, ով ատում է մեկ ուրիշին նրա կրոնի պատճառով, ճշմարտապես չի սիրում Աստծուն:
Որքան է Ինձ զզվանք պատճառում տեսնել նրանց կեղծավորությունը, ովքեր հայտարարում են, թե Աստծո նվիրյալ հետևորդներ են:

Այդ մարդիկ սպառնում են սպանել նրանց, ովքեր չեն համաձայնվում իրենց հետ, և սպանել նրանց, ովքեր վիրավորում են իրենց աստվածներին:
Ուրիշին ատելը մեղք է: Մահացու մեղք է, երբ սպանում են մեկ ուրիշին կամ փորձում մահացու վիրավորել մեկ այլ հոգու՝ կրոնի անվամբ:
Մի՞թե չգիտեք, որ եթե արագ եք մահվան դատապարտելու մեկ ուրիշին այն պատճառով որ նրանք վիրավորում են Աստծուն, ապա դուք չեք հետևում Աստծո Օրենքներին:
Ես կոչ եմ անում բոլոր կրոններին և բոլոր հավատամքներին, ովքեր ասում են, թե հավատում են Աստծուն: Եթե հավատում եք Աստծուն, ապա պետք է սեր ցույց տաք ուրիշների հանդեպ, նույնիսկ երբ նրանք տառապանք են պատճառում ձեզ կամ վիրավորում են:
Շատ ուղիներ են տանում դեպի Իմ Հայրը, բայց միայն մեկ Աստված կա: Ճշմարիտ Աստվածը աշխարհի Արարիչն է, և դուք կարող եք ընդունվել Նրա Թագավորություն միայն երբ սիրում եք ձեր հարևանին, և դա ներառում է ձեր թշնամիներին:
Շատ հեշտ է ատել մեկ ուրիշին, քանի որ չար ոգիները մտնում են Աստծո զավակների մեջ և չարչարում նրանց յուրաքանչյուր վայրկյան: Ինչպես է չարն ուրախանում, երբ հոգևոր մարդը, ով բացահայտորեն հայտարարում է թե սիրում է Աստծուն, ատելություն է հրահրում, և երկու անգամ չի մտածում սպանելու համար նրանց, ովքեր իր կարծիքով նրա թշնամիներն են:
Ոչ մի մարդ չի խուսափի պատժից, եթե սպանում է մեկ ուրիշին: Ոչ մի մարդ չի ընդունվի Նոր Դրախտի մեջ, եթե նա սպանում է մեկ ուրիշին Իմ Հոր Անվամբ:
Դժվար է և վիրավորական երբ վիրավորում են ձեր հավատը, բայց դուք պետք է աղոթեք վիրավորողի համար և երբեք չպետք է մոռանաք <<Մի սպանիր>> Պատվիրանը:
Իմ Հոր Պատվիրանները շատ պարզ են: Նրանք հստակ են: Նրանք սահմանելու կարիք չունեն, բայց վայ այն մարդուն, ով խախտում է Իմ Հոր Օրենքները:
Ձեր Հիսուս

Չարից պաշտպանվելու միայն երեք ձև կա

Երեքշաբթի, 25 սեպտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 12:50

Իմ սիրելի աղջիկ, դու երբեք չպետք է ինքնավստահ զգաս և կարծես, թե այս աշխատանքը, երբ թվում է թե այն լավ է ընթանում, թեկուզ մի պահ կխուսափի չարի խարազանից: Նա կատաղած է: Նա վերցնում է քո ստանձնած յուրաքանչյուր

առաջադրանք, ստեղծում խնդիրներ և խոչընդոտներ, որոնք թողնում են քեզ վշտացած և անօգնական:
Այնքան շատերն են կույր այն խարազանի հանդեպ, որը նա պարտադրում է մարդկությանը: Որովհետև իրենք չեն կարող տեսնել չարին, նրանք չեն հավատում թե նա գոյություն ունի: Նրանք, ովքեր մեղքի միջոցով բացում են նրա համար ճանապարհը և թույլ տալիս նրան մտնել իրենց հոգիների մեջ, նրանց համար անհնար կլինի ազատվել այն սարսափելի վիրավորանքից ու դժգոհությունից, որը նա կբերի նրանց կյանքում:
Չարից պաշտպանվելու միայն երեք ձև կա:
Առաջինը՝ Խոստովանության Խորհուրդը, մաքրագործում է ձեր հոգին, եթե անկեղծորեն եք զղջում:
Ոչ կաթոլիկների համար, խնդրում եմ ընդունեք մեղքերի լիակատար թողության Ընծան **Խաչակրաց արշավանքի աղոթք (24)**-ով, տրված աշխարհին այս Առաքելության միջոցով:
Երկրորդը՝ Իմ Մոր հանդեպ ամենօրյա նվիրվածության միջոցով, ում տրվել է Սատանային ճզմելու զորությունը: Նրա Սուրբ Վարդարանը մի կարևոր վահան է, որը ձեզ և ձեր ընտանիքին կծածկի նրա չար աչքից:
Վերջինը՝ Շնորհի վիճակի միջոցով է, որին կարող եք հասնել Ինձ հետ կանոնավոր հաղորդակցման միջոցով՝ ստանալով Ինձ Սուրբ Հաղորդության մեջ:
Այնքան շատերը, ովքեր ցանկանում են փախչել Սատանայի ճանկերից, և իրենց սրտում գիտեն, որ ներքաշվել են չարի հորձանուտի մեջ, պետք է շրջվեն դեպի Ինձ և խնդրեն Ինձ օգնել իրենց այս հատուկ **Խաչակրաց աղոթքի (78) միջոցով. Փրկիր ինձ Չարից:**
<<Ով Հիսուս, պաշտպանիր ինձ Սատանայի ուժից: Տար ինձ Քո Սրտի մեջ, մինչ ես բաց եմ թողնում նրա ու նրա չար ուղիների հանդեպ ունեցած իմ ողջ նվիրվածությունը:
Ես թողնում եմ իմ կամքը և գալիս Քո առջև ծնկի եկած, խոնարհ և զղջացող սրտով:
Ես թողնում եմ իմ կյանքը Քո Սուրբ Բազուկների մեջ: Փրկիր ինձ չարից: Ազատիր ինձ և տար ինձ Քո պաշտպանության ապահով ապաստանը հիմա և հավիտյան: Ամեն:

Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Մեծ փոփոխություններ կսկսվեն աշխարհում շատ շուտով

Չորեքշաբթի, 26 սեպտեմբերի, 2012թ, ցերեկվա ժ 04:40
Զավակս, մեծ փոփոխություններ կսկսվեն աշխարհում շատ շուտով:
Ժամանակն է, որ Փրկության պլանը ներկայացվի բոլոր ազգերին մարդկության սրտերի մեջ:
Այնքան շատերը կցնցվեն այն Ճշմարտությունից թե իրենք որտեղից են գալիս և թե ինչպես պետք է ազատագրվեն Աստծո Աչքում:
Այնքան անպատրաստ են Աստծո զավակները այս մեծ իրադարձությունների համար:
Իր բոլոր զավակների հանդեպ Աստծո ունեցած Սիրո պատճառով է, որ դուք նախազգուշացվում եք:
Անտեսեք այդ նախազգուշացման նշանները ձեր վտանգի ժամանակ: Ծիծաղեք կամ ծաղրեեք այս Աստվածային Միջամտությունները, որոնք տեղի կունենան բերելու համար մարդկանց սրտերն Աստծո Սրտի մեջ, և դուք կտառապեք:
Զավակներս, դուք պետք է զգոն լինեք միշտ: Երկնքից /տրվող/ նշանները և Աստվածային Միջամտության հրաշքը մոտենում են օր օրի:
Աղոթեք, որ ձեզ տրվի շնորհները՝ բացելու ձեր սրտերը Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի մեծ Գթասրտության հանդեպ:
Բոլոր ճանապարհները բացվում են՝ Աստծո զավակներին ետ՝ դեպի Նրա Սուրբ Սիրտը գրավելու համար:
Ձեր սիրող Մայր
Մայր Փրկության

Մեղքը կարող է ներվել, երբ կենդանի եք: Ոչ մահից հետո:

Չորեքշաբթի, 26 սեպտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 10:12

Իմ սիրելի աղջիկ, Ես թույլ եմ տալիս քեզ ուժգին ֆիզիկական տառապանք, որպեսզի այսօր ավելի շատ հոգիներ փրկեմ: Առաջարկիր այդ ցավը այն ընտրյալ հոգիների համար, ում դու պետք է օգնես Ինձ՝ փրկել: Այդ ցավը երկար չի տևի, բայց երբ այն հանգստանա, իմացիր որ շատ հոգիներ են փրկվել դժոխքի կրակներից և հիմա քավարանում են՝ սպասելով մաքրագործման:
Որպես զոհաբերվող հոգի դու պետք է ընդունես, որ Ես կարող եմ թույլ տալ քեզ տառապանքի պահեր՝ օգնելու համար փրկել Աստծո զավակների հոգիները:Մի օր դու կհանդիպես այդ հոգիներին և կհասկանաս, թե որքան ուրախություն է դա բերում

Իմ Հորը: Իմացիր, որ երբ տառապում ես, Ես տառապում եմ քեզ հետ, որպեսզի թեթևացնեմ քո ցավը: Դու միայնակ չես: Երբ զգում ես որ չես կարող շնչել, դա այն նույն շնչահեղձության զգացողությունն է, որը զգում են այն հոգիները, ովքեր մահից հետո կանգնում են դժոխքի կրակների գոլորշիների դեմ:
Եթե միայն մարդիկ իմանային մահվանից հետո կյանքի մասին ճշմարտությունը: Հոգիների՝ մարմնից հեռանալուց հետո, անկախ նրանից հոգին շնորհի վիճակում է թե ոչ, Սատանան տանջում է /նրանց/ գայթակղության ուժի միջոցով: Նույնիսկ այդ ժամանակ նա փորձում է դեպի իրեն գրավել հոգիներ: Աղոթքը այդպիսի հոգիների համար չափազանց կարևոր է:
Ես գրավում եմ հոգիներին դեպի Իմ Լույսը: Բայց միայն նրանք, ովքեր շնորհի վիճակում են, կարող են դիմանալ Իմ Գթասրտության Լույսին: Եթե նրանք հոգով մաքուր չեն, պետք է մաքրագործվեն քավարանում:
Աղջիկս, քավարանում բազմաթիվ շերտեր կան, և կախված նրանից, թե հոգին ինչ մեղքեր է գործել, նրանք լցվում են Սուրբ Հոգու մաքրագործող կրանկներով: Քավարանը ցավոտ է հոգու համար, և նրանք, ովքեր պետք է այնտեղ ժամանակ անցկացնեն, զգում են դա ինչպես ֆիզիկական ցավ, ասես դեռևս կենդանի են:
Թող ոչ մի մարդ չթերագնահատի այն զոհողությունները, որոնք անհրաժեշտ են իրենց հոգիներն արժանի վիճակում պահելու՝ Իմ Հոր Թագավորության համար:
Իմ Հայրը սիրում է Իր բոլոր զավակներին, բայց հոգիները պետք է վաստակեն Իմ Հոր Թագավորություն մտնելու համար հարմար լինելու իրավունքը: Արժանի լինելու համար նրանք պետք է ազատագրվեն Իմ Աչքում քանի դեռ կենդանի են: Նրանք պետք է անկեղծ սրտով քավեն իրենց մեղքերը:
Նույնիսկ մահվան եզրին մեղավորը կարող է օգտվել Իմ Մեծ Գթասրտությունից՝ խնդրելով Ինձ որ ներեմ իրեն իր մեղքերը: Ես կխլեմ նրան և կվերցնեմ Իմ Բազուկների մեջ: Հետո Ես Իմ Գթասրտությունը կհեղեմ նրա վրա, իսկ հետո ձեռքից բռնած կտանեմ դեպի դրախտի դարպասները:
Մեղքը կարող է ներվել, երբ դուք կենդանի եք: Ոչ մահից հետո:
Ձեր Հիսուս

Երկու միլիարդ հոգիներ, ովքեր կմերժեն Իմ Գթասրտության Ձեռքը

Հինգշաբթի, 27 սեպտեմբերի, 2012թ, առավոտյան ժ 09:00

Իմ սիրելի աղջիկ, այն երկու միլիարդ հոգիներին փրկելու առաքելությունը, ովքեր կմերժեն Իմ Գթասրտության Ձեռքը, պետք է դառնա նրանց ամենօրյա աղոթքի մի մասը, ովքեր իրենց կոչում են Աստծո խաչակիրներ:
Այնքան շատ հրաշքներ կլինեն մարդկության մեծ մասի հետ երբ նրանց տրվի Փրկության Ընծան և մուտքը Նոր Դրախտ:
Իմ Սուրբ Սիրտը ցավում է, այդ կորած հոգիների պատճառով: Ահա թե ինչու Իմ աշակերտները պետք է սրտանց աղոթեն, որպեսզի բոլորը կարողանան միավորվեն որպես մեկ ընտանիք Նոր Դարաշրջանում, քանի որ եթե իմ ընտանիքը մասնատված լինի, դա Ինձ սարսափելի տառապանք կպատճառի:
Ես բոլորիդ կոչ եմ անում փրկել այդ հոգիներին, ովքեր համառորեն կմերժեն ընդունել Աստծուն, **2 միլիարդ կորած հոգիների համար այս Խաչակրաց աղոթքը (79) ասելու միջոցով:**
Ով սիրելի Հիսուս, ես աղերսում եմ Քեզ հեղել Քո Գթասրտությունը կորած հոգիների վրա:
Ներիր նրանց որ մերժում են Քեզ և օգտագործիր իմ աղոթքն ու տառապանքը, որպեսզի կարողանաս Քո Գթասրտության միջոցով նրանց վրա հեղել այն Շնորհները, որի կարիքն ունեն իրենց հոգիները սրբագործելու համար:
Ես խնդրում եմ Քեզնից անհիշաչարության ընծան նրանց հոգիների համար:
Ես խնդրում եմ Քեզ բացել նրանց սրտերը, այնպես որ նրանք գան Քեզ մոտ և խնդրեն Քեզ լցնել իրենց Սուրբ Հոգով, որպեսզի կարողանան ընդունել Քո Սիրո Ճշմարտությունը և ընդմիշտ ապրեն Քեզ հետ ու Աստծո ողջ ընտանիքի հետ: Ամեն>>:
Շատերի համար դժվար է ընդունել Աստծո Գթասրտությունը: Դա այն ուժի պատճառով է, որն ունի Սատանան նրանց հանդեպ: Միայն թե շատ դեպքերում նրանք չգիտեն դա:
Որոշ դեպքերում, այնուամենայնիվ, նրանք չեն կասկածում Աստծո գոյությանը, սակայն ընտրում են Սատանային ամբողջապես գիտակցելով որ Աստված գոյություն ունի և Նա է ստեղծել իրենց: Նրանք շրջում են իրենց մեջքը Աստծո Թագավորությանը:
Նրանց ընտրածը Սատանայի կողմից խոստացված թագավորությունն է: Նրանք հավատում են, թե այդ թագավորությունը ժամանակի վերջում կառաջարկի մեծ հարստություն, մեծ հրաշքներ, և թե այն կլինի մի աշխարհ, որը շողշողում է, միայն թե դա այդպես չէ: Նրանց գտածը կլինի միայն կրակի մի լիճ, ուր կտառապեն չարի ձեռքում: Նա կտանջի նրանց հավիտյան, և նրանք ամեն վայրկյան կտառապեն այդ ցավով, քանի որ այն երբեք չի կարող վերջանալ:
Հիմա գիտեք, թե ինչու եմ Ես այդքան տառապում սոսկ այն տառապանքի մտքից, որը

սպասվում է այդ հոգիներին, քանի որ դա չափազանց շատ է կրելու համար:
Միայն ձեր աղոթքները, Իմ հետևորդներ, և Իմ Գթասրտությունը կարող են նրանց հույս առաջարկել:
Օգնեք Ինձ փրկել նրանց:
Ձեր Հիսուս

Այդ մարդը կասի աշխարհին, թե ինքը Մեսիան է, և նրան կծափահարեն աշխարհի շատ առաջատար դեմքեր

Ուրբաթ, 28 սեպտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 10:15

Իմ սիրելի աղջիկ, աշխարհում կանխասացված մեծ փոփոխությունները՝ Իմ Երկրորդ Գալուստին նախորդող, պատրաստ են ծավալվելու շերտ առ շերտ:
Ինքնակոչների ժամանակը, ովքեր կհայտարարեն թե գալիս են Իմ Անունից և կներկայացնեն իրենց աշխարհին, շատ մոտ է:
Այնքան շատերը կհիմարանան՝ հավատալով այդ կեղծ մարգարեներին, քանի որ նրանք կհայտարարեն իրենց մասին մեծ շուքով:
Բայց մեկը նրանց միջից շատերին կխաբի, քանի որ կներկայացնի իրեն որպես թագավոր, խոնարհ ձևով, համոզելու համար մարդկանց, թե նա Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը:
Այդ մարդը կասի աշխարհին, թե նա Մեսիան է, և նրան կծափահարեն աշխարհի շատ առաջատար դեմքեր:
Նրան առաջին հերթին կներկայացնեն որպես արտակարգ և կարեկից քաղաքական առաջնորդ:
Նա կերևա որպես տաղանդավոր խաղաղարար, ինչպես արդեն ասել եմ: Նրա ձևերն ու շնորհները կցուցադրեն մի խորհրդավոր կերպար, որը կթվա աստվածային ծագման:
Նրա գեղեցիկ արտաքինն ու տաղանդավոր անձնավորություն լինելը կգրավի /մարդկային/ զանգվածներին:
Շուտով նա կբացահայտվի աշխարհին, և նրա հայտնվելը կլինի հանկարծակի:
Այն առաջնորդները, ովքեր նրան կներկայացնեն որպես փրկիչ, որպես մի մարդ ով խաղաղություն կբերի Միջին Արևելքում, այդ առաջնորդներին հարգում են աշխարհի շատ մասերում: Ահա թե ինչու այդ կեղծ մեսիային այդքան հեշտությամբ կընդունեն:
Որոշ ժամանակից նրա կոչը կտարածվի: Լրատվամիջոցները կգովաբանեն նրա դիվանագիտական հմտությունները, և նրան շատերը կհետևեն:
Սա այն մարդն է, ով կասի, թե ինքը մեսիան է: Նա բոլորին կասի, թե ինքը Հիսուս

Քրիստոսն է, ով ետ է եկել՝ հայտարարելու իր երկրորդ գալուստը:
Նա հակաքրիստոսն է:
Չհիմարանաք ոչ մի պահ: Ես՝ Հիսուս Քրիստոսը, եկա մարմնով առաջին անգամ՝ փրկելու համար մարդկությանը: Բայց իմացեք սա: Ես չեմ գա մարմնով այս անգամ: Ես կգամ, ինչպես գողը՝ գիշերով: Ես կնախապատրաստեմ աշխարհին այս պատգամների միջոցով, բայց ես ձեզ չեմ ասի ոչ օրը, ոչ էլ ժամը, քանի որ Ես չգիտեմ դա: **Միայն Իմ Հայրը գիտի այդ ժամանակը:**
Ես կհայտարարեմ Իմ Երկրորդ Գալուստը Իմ ժամանելու նշանից առաջ, որը կհայտնվի երկնքում ողջ աշխարհով մեկ:
Ցանկացած մարդ, ով հայտարարում է թե ինքը Հիսուս Քրիստոսն է, և ով քայլում է երկրի վրա որպես մարդ, ստախոս է:
Փախեք, քանի որ նա կբերի անասելի թշվառություն և տառապանք: Նրա խաբեությունը կթմրեցնի հոգիներին՝ սիրելու մի կեղծ Աստծու: Նա կշրջի Ճշմարտությունը: Նրանք, ովքեր հետևում են նրան, մեծ վտանգի մեջ են:
Ձեր Հիսուս

Հավատացողները երբեք չպետք է ապահով զգան այն գիտելիքով, թե իրենք ճանաչում են Ճշմարտությունը

Շաբաթ, 29 սեպտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 07:15

Իմ սիրելի աղջիկ, Ես պետք է ասեմ բոլոր նրանց, ովքեր հավատում են Ինձ՝ Հիսուս Քրիստոսին, որ արթնանան հիմա և ապրեն իրենց կյանքն Ինձ հետ:
Այս պատգամները տրվում են ոչ միայն նախազգուշացնելու համար նրանց, ովքեր չեն հավատում Քրիստոսին՝ մարդկության Ազատարարին, նրանք նաև Աստծուն հավատացողների համար են:
Հավատաացողները երբեք չպետք է ապահով զգան այն գիտելիքով, թե իրենք ճանաչում են Ճշմարտությունը:
Ձեզնից նրանք, ովքեր ասում են ճանաչում են Իմ Ուսուցումների Ճշմարտությունը, դուք երբեք չպետք է ինքնագոհ լինեք: Այլապես դա կարող է նշանակել, որ դուք մերժում եք այն աշխատանքը, որն անհրաժեշտ է սրբագործելու համար ձեր հոգիները:
Հավատացողները կարող է շփոթության մեջ ընկնեն Իմ Ուսուցումների վերաբերյալ: Այնքան շատերը չեն հասկանում Իմ Երկրորդ Գալուստի իմաստը:

Իմ հետևորդներից շատերը մտածում են, որ ողջ մարդկությունը կգիտակցի դա, և որ Իմ Գթասրտության միջոցով նրանք կփրկվեն: Ոհ, որքան եմ Ես ցանկանում որ դա ճիշտ լինի: Ինչպես դա կբերեր Իմ վերջնական թեթևացումը: Ցավոք, շատերը նախապատրաստված չեն լինի: Շատերը կմերժեն լսել Իմ նախազգուշացումները և հրահանգները: Որպես այդպիսին, նրանք չեն կարողանա նախապատրաստվել համապատասխան ձևով:
Իմ Երկրորդ Գալուստը կլինի: Այն հավատացողներին, ովքեր ասում են թե հավատում են Սուրբ Աստվածաշնչում պարունակվող Ճշմարատությանը, իմացեք հետևյալը: Ձեզ համար հեշտ է ընդունել այն ինչ մարգարեացվել է նրանում, և այն ինչ արդեն տեղի է ունեցել: Այդքան էլ հեշտ չէ ընդունել այն գալիք մարգարեությունները, որոնց մարդկությունը դեռևս պետք է ականատես լինի:
Ընդունեք նաև այն փաստը, որ Աստվածային Պատգամներ կուղարկվեն, նախապատրաստելու համար ձեզ: Ընդունեք, որ այդ նախապատրաստությունը տեղի է ունենում հիմա:
Զգոն եղեք միշտ: Մի մերժեք Ինձ այս անգամ, քանի որ սա նախապատրաստությունների ժամանակ է:
Շնորհակալ եղեք, որ ձեզ տրվում է այս մեծ ընծան:
Ձեր սիրող Հիսուս

Այնքան շատերն են այսօր կլանված հռչակի և ինքնափառաբանման ետևից վազելով

Շաբաթ, 29 սեպտեմբերի, 2012թ, երեկոյան ժ 11:00

Իմ սիրելի աղջիկ, ինչու այդքան շատ մարդիկ աշխարհում հավատում են , թե իրենց մահկանացու լինելն անորոշ է:
Այնքան շատերն են այսօր կլանված հռչակի և ինքնափառաբանման ետևից վազելով: Մեծ ճանաչում ու հաջողություն փնտրած և գտած այնքան շատերին են կռապաշտում այն մարդիկ, ովքեր հավատացած են, թե դա այն փառքն է որին իրենք պետք է ձգտեն, և որը կբավարարի իրենց:
Նրանց ժամանակի շատ փոքր մասն է ծախսվում նրա վրա, ինչն իսկապես նշանակություն ունի: Նրանք ոտնակոխ են անում ուրիշներին, հասնելու համար իրենց ուզածին՝ աշխարհի առջև փառքով փայլելու իրենց անհագ ցանկության պատճառով:

Նրանց սնափառությունը սնվում է զվարճության աշխարհի, լրատվամիջոցների միջոցով, իսկ ինքնակատարելագործման հասնելու նրանց վազքը ծափահարում են:
Ահա թե այսօր ինչի են ձգտում հասարակ մարդիկ: Նրանք բացահայտորեն հիանում են այդպիսի նկրտումներով, և դա դառնում է ինչպես կրոն: Նրանք կռապաշտում են նրանց, ովքեր հասնում են այդպիսի բարձունքների, իսկ հետո սկսում են նմանակել նրանց կյանքը:
Ոչ մի անգամ նրանք չեն մտածում, որ այդպիսի բաներն իսկական հետևանք չունեն: Նրանք երբեք կանգ չեն առնում՝ իրենք իրենց հարցնելու. <<Արդյո՞ք սա այն է, ինչից պետք է կազմված լինի իմ կյանքը>>:
Նրանք չեն հավատում Աստծուն շատ դեպքերում, քանի որ եթե հավատային, ապա կիմանային, թե Աստծո Աչքում որքան տհաճ է այդ ձևով ստորաքքարշություն փնտրելը:
Երբ մարդ մշտապես ուշադրություն է փնտրում և կլանված է այն պատկերով, որը ցուցադրում է աշխարհին, նա չի հասկանում թե որքան կարճ է այդ ճանապարհը: ԱՅն կանհետանա ժամանակի ընթացքում, և նա իրեն կգտնի դատարկ և առանց սիրո, որ կիսի մյուսների հետ: Նրանք կանեն ամեն ինչ, ներառյալ գործողություններ որոնք վիրավորում են Աստծուն, որ հասնեն ինքնափառաբանման:
Այս սերնդին այնքան շատ ստեր են ասվել այն մասին, թե ինչպես ապրեն իրենց կյանքը: Նրանք խրախուսվում են մի աշխարհի կողմից, որը հավատում է թե նյութական շահը, զվարճությունները, մշակույթն ու մեծ հիացմունք բերող նկրտումները ամենակարևոր բաներն են, որոնց պետք է ձգտել:
Որքան քիչ գիտեն նրանք: Որքան ցնցված կլինեն նրանք, երբ հայտնաբերեն թե ինչքան սխալ են եղել:
Այդպիսի կյանք վարող մարդիկ կանգնում են հիասթափության առջև, երբ նրանց ագահությունը չի բավարարվում: Ավելի շատ հաճույք բերելու համար նրանց կողմից կատարվող ցանկացած գործողություն, ինքնամոռաց նկրտումների մեջ, նրանց չի կարողանա խաղաղություն բերել:
Աղոթեք, որ մարդիկ հասկանան շուտով, որ հռչակի ու ինքնափառաբանման հետապնդումը միայն կարճ ժամանակ է բավականություն պատճառում: Միայն մեկ վերջնանպատակ կա, որին պետք է ձգտեք, և դա Տիրոջ Ուսուցումներին հետևելն է: Երբ դա անեք, կլինեք խաղաղության մեջ:

Դուք կարող եք շարունակել վայելել աշխարհի շատ հաճույքներ, սակայն կհասկանաք, թե իրականում ինչը նշանակություն ունի:
Այնքան շատ երիտասարդներ են մեծ նշանակություն տալիս այն բանին, թե ինչպես են իրենք երևում ուրիշներին: Նրանց վրա գործադրվող ճնշումը, որ վարեն իրենց

կյանքը՝ հետևելով այն նույն նպատակներին, ինչ իրենց կողմից հիացմունքի արժանացած զվարճություններ են, վնասում է նրանց հոգիներին:
Դա փակում է այն իրականությունը, թե ինչն է հաճելի Աստծուն:
Դա փակում է Ճշմարտությունը:
Միայն Ճշմարտությունը նրանց կտա բավարարվածություն և կբերի նրանց խաղաղություն, սեր, ուրախություն և երջանկություն:
Ես այն Կյանքն եմ, որը նրանք փնտրում են:
Իմ մեջ նրանք կգտնեն Փառքի կյանքը:
Սա է այն Փառքը, որը նրանք պետք է փնտրեն:
Քանի որ նրանք կապրեն Մեծ Փառքի կյանք Նոր Դրախտի մեջ, եթե շրջվեն դեպի Ինձ:
Սա է միակ փառքը, որ կբերի նրանց անասելի ուրախություն:
Ձեր Հիսուս